

4894

295

g-30

pohpihu
1895

U

2010

295
2-90

2039

ԳՐԱԴԱՏԱԿ

Թարգմանեց և ծանօթութիւններ աւելացրեց
Հեղիոս Գևորգեանը

2001

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձեի: || Տիպ. М. Шарадзе и К°
1895



9748

Дозволено цензурою. Тифлисъ, 30 Июня 1895 г.



5026-50

୨୦୦୮ ପରିଷକ

ט

ԹԱԳՈՒԽԻ ՓԱՐԱՄՈՒՁԵԱՆՑԻՆ

Որի դրամներն օժանդակութեամբ լոյս
տեսաւ գրքոյիս:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշակերտական ազատ ու թանկագին ժամերս յուրա
պէտ չլատնելու եւ պատահնեկալան հասակումս ծաղած
դէպի լեզուաբանութիւնը, մատինագրութիւնը եւ հնախօսու-
թիւնը (Archæologię) բռուն տենչնանքիս սակաս մի
բաւականութիւն տալու համար, ծեռնամուխ եղայ մի
յանդուզն քայլ անելու դէպի հայկական աղքատ գրականու-
թեան գանձարանը այս թարգմանական դուզնաքեայ երա-
խայրիք լումայովս, ի նկատի ունենալով մեր համեմարեղ
բանաստեղծ եւ հրապարակախօս Սմբատ Շահագիեւանի ա-
շակերտին քաջալերիչ խօսքերը*).

Մենք մերովսանն աշխատեցինք բայ պատշաճին մի քանի կարեւոր ծանօթութիւններ առելացնել այս կամ այն կտր պարզեցւ համար որ եւ կյորդեցինք գրքիս վերջին:

ԼԵՒՈՆ ԳԵՂԱՐԳԵԱՆՑ

Ս. Էջմիածին
1895 թ. մայիսի 22-ին.

^{*)} Տես. Հրապարակախոս Պայն. Մոսկուա,
1881 թ. երես 342.

ΩΓΑΤΑΣ

ՀՐԱԴԱԾ

Հին պարսիկների «Միջդաշիզմ»¹⁾ կոչուած կրօ-
նի հիմնադիրը համարւում է Զրաբշաշտ մոգը, որի
անձնաւորութիւնը կիսաառասպելական է: Պատմու-
թիւնը սրա մասին առաջին անգամ յիշում է Պարս-
կաստանի ամենամեծ թագաւորներից մէկի՝ Դարեհ
Վշտասպեանի²⁾ ժամանակից, որ ապրում էր Քրիս-
տոսի ծննդից առաջ՝ վեցերորդ դարի վերջում կամ
հինգերորդի սկզբում և որը փորձ արաւ Պարսից
պետութեան մէջ գտնուող բազմաթիւ այլազան տա-
րերը ի մի ձուլելու: Դարեհ Վշտասպեանի պայա-
գատութեան ականաւոր պատմական իրողութիւննե-
րից մէկն է կազմում Զրագաշտական վարդապետու-
թեան ընդունելութիւնը Պարսկաստանում:

Զըալաշտն իւր յօրինած վարդապետութեամբ
հանդերձ, յայտնի էր հին յոյներին և հոռմայեցինե-
րին որպէս մողերի վարդապետութեան հաստատիչ։
Սակայն դասական մատենագիրներից մեզ հաղոր-
դած հատ ու կտոր ու անհաւաստի տեղեկութիւն-
ները չեն բաւականանում լիովին պարզաբանելու
նրա անձնաւորութեան էութիւնը և իւր հեղինակած
կրօնը։ Եւս առաւել սակաւ տեղեկութիւններ են
աւանդում մեզ նոքա այն հնագոյն ժամանակների
ճշգրիտ նկարագրութեան նկատմամբ, որի լրջանին
(époque) իբր թէ վերաբերում է նորա կեանքը։

Աւելի անփոփ տեղեկութիւններ են հաղոր-

դում մեզ տեղական աղբիւրները. ինչպէս օրինակ՝ «Զենդաւեստիա»³⁾ անուանուած պարսիկների սրբ-քալան մատեանները և յետին ժամանակների մահ-մեդական աղբիւրները. օրինակ, «Ֆիրդուսի գիրք թագաւորաց»⁴⁾ մեծահոչակ մատեանը, ուր բանաստեղծը զետեղում է այն բոլոր իրերն ու նկարագրութիւնները, որ գիտեր Զրադաշտի մասին վերջինս հետևողների երկասիրութիւններից:

Դառնայով այս երեկի անհատի անձնաւորութեանը, մենք պէտք է առենք, «ր միայն յոյներն ու հոռվմայեցիներն էին սորան «Զարսաստր»⁵⁾ անուանում, մինչդեռ իրանական հնագոյն բնեւագրութիւնների մէջ սա յորջորջում է «Զարօդոշտրա». ըստ ամենայն հաւանականութեան Զրադաշտ կամ Զարսաստր անունն առաջ է եկել ժամանակի լնթացրում սոյն սկզբնական ձևից:

Մենք ոչ մի հաւաստավատում պատմական տեղեկութիւն: չունենք Զրադաշտի վարած կեանքի ժամանակների մասին, արեելեան մատենագիրներն ասում են, որ նա ապրում էր աշխարհի ստեղծագործութիւններից 3000 տարի յետոյ: Արևմտեան⁶⁾ պատմակիրներից ոմանք Զրադաշտին վերաբերում են Կամբիսի⁷⁾ և Շմերլիսի⁸⁾ ժամանակներին, միւսներն ենթագրում են թէ նա ապրելիս է եղել Քրիստոսի ծննդից 600, 1000 և մինչև անգամ 6000 տարի առաջ:

Յունաց և Հոռվմայեցոց պատմիչների կարծիքով Զրադաշտը ծագումով Բակտրիացի⁹⁾ պէտք է եղած լինի. ուրիշ պատմաբաններ նրան համարում են ընկի Մարտաստանցի,¹⁰⁾ երբեմն նաև Պարսկաստանցի: Զենդաւեստիայի էջերում Զրադաշտը յորջոր-

ւում է Արիաս—Վերնացի¹¹⁾ մի գերահոչակ անհատ, որտեղ իբրև թէ գտնւում էր նրա հօր տունը և ուր Զրադաշտ՝ ինքն անձամբ նուէրներ և առատ զոհաբերութիւններ էր ձօնում աստուածներին: Այսպէս երևում է, որ Զրադաշտի կեանքի ժամանակները, հայրենիքը և ծագումը ճշտութեամբ չէ կարելի որոշել, թէպէտ և նրա հայրենիքը առաւել չուտով կարելի է գտնել Իրանի արևմտեան բաժնում քան արևելեան:

Հիմա դառնանք Զրադաշտի կեանքի պատմութեանը: Հասկանալի բան է, որ զարմանալի չէ այն հանգամանքը, որ մի ծննդավայրն և կեանքի ժամանակներն անյայտ մարդու կենսագրութիւննը կիսով չափ առասպեկտական է լինում: Սակայն նրա առասպեկտական աւանդութիւնները բովանդակապէս չեն քաղուած անգամ հնագոյն աղբիւրներից. անտարակոյս սոցանից շատերը բանահիւսուել են սեթենեթելով յետին ժամանակների ընթացքում այլ և այլ անձնաւորութիւններից: Ոչ Զենդաւեստիայում, ոչ դասական մատենագիրների գրուածներում և ոչ Ֆիրդուսու երկասիրութիւնների մէջ մինչև անգամ չէ կարելի գտնել Զրադաշտի ամբողջ կենսագրութիւնը, այնպէս որ մարդ ակամայից ստիպուած է լինում տեղեկութիւններ հաւաքել յետագոյն ժամանակների աղբիւրներից, տեղ-տեղ յաճախ դիմելով հնագոյն հեղինակներին այս կամ այն դիպուածի վաւերականութեան աղագով: Զրադաշտի կեանքի առասպեկտական բնաւորութիւնն արդէն արտայայտում է, որ իւր կենսագրութիւնը սկսում է իր ծննդեան ժամանակներից (point de temps) շատ առաջ. այս պարագան երևում է ոչ թէ միայն նորագոյն աղ-

բիւրներում այլև հէնց «Զենդաւեստիայի» մէջ։ Եւ չէ կարելի ասել, որ նրա կենսագրութեան այս մուշտ շրջանը մեզ համար նշանակութիւն չէ ունեցել։ Մաղդակմի կամ Զրադաշտի վարդապետութեան անձնանուէր մարդկանց համար Զրադաշտի ծնունդը ու գործունէութիւնն անտարակոյս հանդիսանում է աշխարհիս ամենավսեմ իրողութիւններից մէկը, և համայն մինչև նորա երեան գալը կատարուած հերոսական միրագործութիւնները պէտք է ծառայէին միայն այն հանգամանքին, որ աշխարհում չարկիները վերջանային և այս կերպով նախապատրաստէին մի վեհ դէպք՝ Զրադաշտի ծնունդը։ Աշխարհումը ամեն ժամանակ և ամեն պարագաների շրջանում այսպիսի մի մեծ մարգարէի յայտնութիւնը չէր կարելի։—այնպիսի մի բարձր իրողութիւն կարող է տեղի ունենայ միայն այն ժամանակ, երբ չարն ու բարին հաւասարակշուութեան մէջ են գտնուում։

Ոչ պակաս նշանակութիւն ունի աւանդութեան էջերում այս հերոսի ծագումը. նա թագաւորական գարմից էր, ուստի և իւր կատարած սիրալիր գործերը նկարագրած են ուրիշ հերոս արքայագունների քաջագործութիւնների հետ Շթագաւորների գըրքում։ նա ինքն ևս դիւցազն էր ու հսկայ, բնաւ ու բրիշներից ֆիզիքական ուժի ճարտարութեամբ նուաստ չէր, թէպէտ և իւր կատարած ամբողջ գործունէութիւնը սակաւ բացառութեամբ մաքուր հոգեոր կամ կրօնական բնաւորութիւն է կրում։ Նրա ծննդեան ժամանակ չար ոգի Անդրօ—Մայնուսը¹²⁾ փախչում է սրտի տագնապով, կարծում էր թէ բարի ոգիներից ոչ չէ կարող իրեն զօրութեանը յաղթել, բայց Զրադաշտը յաղթահարում է նրան իւր զէնքով՝ աս-

տուածային խօսքով, որ արտասուել էր նախ քան աշխարհիս արարչագործութիւնը լուսաւոր Ահուրա—Մաղդակա աստուածութիւնից։ Զրադաշտն իւր վարդապետութիւնն երեւան բերելով հալածեց ընդ միշտ ցարդ երկրիս վրայ աստանդող դեերին։ Բոլոր այն դեերի մարմինը, որոնք ընդունակ էին անտեսանելի դառնալ մարդկանց աշքին, նա խորտակում էր իսպառ, իսկ նոցա մարմինը, որ գուրկ էին այս կարողութիւնից հէնց իւրեանց էութիւնն էր խորտակում։ Մարմնի խորտակումն կայանում է նրանում, որ այդ ժամանակից սկսած դեի մարմնի մէջ այլևս մեղք չէր կարող կատարուել, սակայն մարդու կամ կենդանու մարմնում տակաւին նոքա կարող էին մեղք գործել։ Այս յօդուածին նշանակութիւնը պարսկուց աստուածաբանական գրուածներում բացատըրում է այս կերպով։ «Զրադաշտի յայտնուելուց առաջ դեերը կամ չար ոգիները մարդկանց կերպարանքի տակ ծածկուած անդադար և բացարձակապէս թափառում էին երկրիս վերայ, իսկ «պէրէրը՝ դեերի կանայք կանանց կերպարանքով՝ դեերը գեղեցիկ կանանց իրանց ամուսին էին առնում և նոցա հետ ամեն տեսակ յուի չարագործութիւններ և զգուելի արարքներ կատարում, սակայն երբոր Զրադաշտն իւր վարդապետութիւնն աշխարհ բերեց, խորտակեց նոցա մարմինն, որից զերծ մնալու համար թագնեռում էին երկրի մակերևոյթի ներքոյ և երքեմն, եթէ կամենում էին մի անարդ գործ ևս կատարել, չէին կարողանում մարդու կերպարանք հատգնել, այլ ցուլի և էշի։ Այսպէս ուրեմն կարելի է ասել, որ Զրադաշտի երեան գալով վերջանում է առասպելական շրջանը (régiode)։—այս արժանայի-

շատակ ժամանակամիջոցից սկսած դեւրն այլ և՛
չին կարող գերբնական զօրովթեամբ ներգործու-
թիւն ունենալ և հրէշաւոր կենդանիների մարմին
առնել, ուստի քարի աստուածութիւնները կարող
էին աշխարհիս արարածների և իրերի վրայ ազդե-
ցութիւն ունենալ սովորական ուժով.—աշխարհիս
գործերն ընթանում էին օրինաւոր և հասարակաց
կարգով: Սրանից երեսում է, թէ Զրադաշտն որպի-
սի հոչակաւոր անձնաւորութիւն էր և թէ սրա ցեղն
որքան քաղդ և պատիւ էր համարում իրեն, ունե-
նալով իւր տան անդամների շրջանում այսպիսի մի
վեճ և բնաձիր անհատ: Բացի սրանից, ուշանդութիւ-
նը Զրադաշտի ծագումը վերագրում է ոչ միայն նը-
շանաւոր թագաւորական ցեղի, այլ և աստուածային,
որ միայն այստեղ չէ պատահում իրանական առաս-
պելների մէջ: Զրադաշտի մօրը գիշեր ժամանակ
յայնուում է իւր որդու ապագայ մեծութիւնը: Մէկ
անդամ երազում տեսնում է նա իւր թէ երկնքի
խիտ թանձրամած ամպերն իրեն տան վրայ են
թափւում առիւծներ, վագրներ, օձեր, վիշապներ և
այլ բազմագիմի անհեթեթ կենդանիներ, որոնցից թէ
ամենամեծը և ամենաահեղը յարձակւում է իր վրայ,
մանկան արգանդից հանելու և յօշոտելու նպատա-
կով: Հէնց այս միջոցում երբ մայրը ահեղ տագնա-
պով նայում էր սոյն սոսկալի տեսարանի վրայ,
մանուկը ահեղագոչ ձայն քարձրացրեց և սկը-
սեց միսիթարել մօրն ասելով՝ «Մի վախենար, ով
մայր իմ, որովինետ դոցա պէս անհեթեթակերպ իեն-
դանիներն երբէք չեն կարող վնասել ինձա: Եւ իրա-
ւամբ, տակաւին նա այս քաջալերիչ խօսքերը չա-
ւարտած, երկնքից վայր ընկաւ մի ճաճանչափայլ

լեառն, որի ահեղ երևարով վախստական եղաւ այս
ոժնադէմ արարածների մեծամասնութիւնը: Աերան
մերձենալու ժամանակ հապճեպով զուրս եկաւ Իրա-
նից մի չքնաղագեղ և կայտառ պատանի, մի ձեռ-
քում բռնած գաւազան, իսկ միւսում գիրք: Պատա-
նու արտաքոյ կարգի յայտնուելով համայն չար ոգի-
ները վախստական եղան զանադան կողմեր երե-
քից զատ—առիւծից, գայլից և յովագից. սակայն սո-
քա ևս բռնադատուեցան հեռանալ, երբ նա գաւա-
զանը մեկնեց իւրեանց վրայ: Դուդգան առաւօ-
տեան զարթներով, այսպէս էր անուանուում նրա
մայրը, մեծ տագնապալից զգացմունքներով պաշա-
րուած փութաց երազ մեկնող կախարդի մօտ, որ
նախագուշակեց իրան, թէ իւր որդին մեծ մարդ-
պէտք է գաւոնայ ոչ հեռու ապագայում: Աղջամզա-
յին ամպը և լերան ճաճանչ վայլակը ցոյց են տա-
լիս, որ ինքը և իւր որդին սկզբում անձկութիւններ և
տաւապանքներ պէտք է կրեն բռնակալների հարստա-
հարութիւններից և լլկանքներից. սակայն ի վերջոյ
յաղթող պէտք է հանդիսանան բոլոր վտանգներին
և անագորյններին տուած կտտանքներին: Պատա-
նու ձեռքում եղած ցուպն ապացոյց է իւր գալիք
աստուածային կարողութեանը, նեղիչ հակառակորդ-
ների դէմ. մատեանը՝ մարգարէական գործունէու-
թեան պատգամն է, որ տնօրինած նախախնամու-
թիւնից իւր որդուն, իսկ երեք մնացած գազանները
ցվերջ Զրադաշտի անհատ թշնամիներն են, որոնք
վերջ ի վերջոյ պէտք է հպատակովին նրա հեղինա-
կութեանը:

Զրադաշտի մանկութիւնը և երիտասարդու-

թիւնը նոյնպէս լի է պէս պէս հրաշքներով։ Երբոր նա ծնուեց, ուրիշ նորածին համբակների պէս լաց չէր լինում, այլ խնդում էր շարունակ, որով և ընդհանրութեան ուշագրութիւնը գրաւում էր գէպ իրեն։ Այս առաջին հրաշքը։

Զարութեան դեկրը, որոնցով յայտնի է թէ ինչ մեծ վիճակ էր սահմանուած մանկանը, երկնչում էին նրա իշխանութիւնից և ամեն կերպ աշխատում էին վնասել նրան։ Այն երկիրը, որի մէջ ծնուեց, Զրադաշտը, գտնւում էր չար և անօրէն թագաւորի իշխանութեան և չար ողիների ազդեցութեան ներքոյ։ Երբոր նրա ծնուած երկրի խստասիրտ թագաւորի ականջին հասաւ լուրը, թագաւորը հարց ու փորձ անելով ու տեղեկանալով, որ այս մանուկն աճելուն պէս պէտք է իւր անվախճան պետութեան անկման պատճառ լինի, գնաց նրա ծնողների մօտ երեխային մահացնելու նոպատակով։ Սա գտաւ համբակին օրօրոցում հանդարտ պատկեցրած իւր ծնողների հանդէպ, և հէնց որ ձեռքը մեկնեց երեխային շօշափելու, իսկոյն և եթ ամբողջ ձեռքը քար դարձաւ։ Այս տարօրինակ երեսոյթը տեսնելով հարկադրուեց թողնել հետանալ առանց ի կատար ածելու իր չարագործ մտադրութիւնը։ Այս երկրորդ հրաշքն է։

Սակայն չար ողիները չվնատուեցան այս անշջողութեամբ։ Նոքա խարդախ միջոցներով գողացան Զրադաշտին իւր մօր հովանաւորութիւնից ու փափցրին մի ամայի և անծանօթ անապատ, ուր քազմաթիւ կիզիշ նիւթեր թափելով խեղճ մանկան վերայ, վառեցին սաստկապէս։ Նոքա ստուգիւ հաւատացած էին, որ այս միջոցների օժանդակութեամբ լկամահ կանեն անտէրունչ մանկանը, բայց

վրիսպուեցան, որովհետև Զրադաշտը թէսէտ և ամեն կողմից ընդգրկուած էր բոցավառ կրակով, այնու ամենայնիւ անդորրապէս շարունակում էր քնել։ Որդեկորոյս մայրն այստեղ՝ այնտեղ վնատուելով գաւակին, վերջապէս եկաւ գտաւ պրան զուարթ տրամադրութեամբ և առողջ մարմնով։ Այս երրորդ հրաշքն է։ Այս երրորդ ապարդիւն փորձեց զկնի կախարդները թագաւորի հրամանով խորհեցին մի նոր եղեւունագործութիւն։ Երեխային դըն մի նեղ շաւղի մէջ տեղը, որի վրայով պէտք է անցնէր ամբողջ հօտը, այս միջոցով մեծայոյն էին երեխայի խսպառ կտամանալ տեսնել սակայն հօտի անցնելու ժամանակ ամենամեծ ցուլիրից մէկը յառաջ գալով՝ սրունքները լայնատարած կերպով կանգնեց երեխայի վերայ մինչև բովանդակ հօտի անցնելն։ Սոյնպիսի մի գէպք կատարուեց և մի այլ անգամ, երբ նրան դըն ճառապարհի մէջ և ամբողջ ձիաների ջոկն անցկացրին վրայով։ Այս չորրորդ և հինգերորդ հրաշքն է։ Վերջապէս թագաւորը փորձեց Զրադաշտին զցել մի մատակ գայլի որջ, որ ձագերը հէնց այդ ժամանակ սպանել էին կորպելով մօրից, բայց աստուածութիւնը մեծապէս պաշտպան հանդիսացաւ իւր ընտրեալին, երկու երկնային կովեր մօտեցան նրան և կերակրեցին կաթով։ Այսպէս էր վեցերորդ հրաշքը, որով և փրկուեցաւ Զրադաշտի կեանքը։

Զրադաշտին կենախսուզելու այս ունայն փորձերից յետոյ նրա թշնամիները պէտք է յետ կենային երանց յոոի դիտաւորութիւնից։ Մանուկն աճում էր իր հօր ողջագորով ինամակալութեան տակ։ հայրը տեսնելով զաւակի ընդունակութիւնները և դէպի ուսումն ունեցած եռանդը, հրահանդել տուեց

Նրան չար կախարդների յըջանում ապրող մի բարե-
պաշտ մարդու մօտ։ Զրադաշտն եօթը տարին լրաց-
նելուց յետոյ, կախարդները կը կին ձեռնամուխ ե-
ղան փորձերի իրեն սպանելու նպատակով, սակայն
դարձեալ ապարդիւն։ Սրանից յետոյ չարամիտ կա-
խարդները յոյս ունէին, որ գոնեա սոսկալի արհա-
ւիրքներով կարող են նրա մազատուը կեանքին վախ-
ճան դնել, բայց երբ նոքա իրանց կախարդութեան
միջոցով աշխարհ կանչեցին զանազանակերպ անհե-
թեթ կենդանիներ, որոնց տեսնելու ժամանակ ամեն
ոք սարսափի և ահի մէջ էր ընկդմւում, Զրադաշտը
մնաց բոլորովին անվեհեր։ Այս նոր փորձը, որին
Զրադաշտը յաղթող հանդիսացաւ, յայտնի է եօթնե-
րորդ հրաշքի կոչումով։ Վերոյիշեալ երևոյթներից
յետոյ Զրադաշտը հիւանդացաւ, նորա թշնամիները
օգտակար գեղերի պատրուակով թոյն տուաշարկե-
ցին նրան խմելու, բայց նա լաւ գիտենալով իւր
նենդաւոր թշնամիների խարդախութիւնը բացէ ի
բաց հրաժարուեց գեղն ընդունելուց, որից սակաւ
ժամանակ զկնի ինքն իրեն առողջացաւ. այս ութե-
րորդ հրաշքն է։

Զրադաշտի 15 տարեկան հասակում նրա հայ-
րը մի ճոխ հացկերոյթ տուեց պատուաւոր մարդ-
կանց, որ մասնակցում էին նաև Դուրանսարուն և
Բուրանսարուն թագաւորները. վերջինս նշանաւոր
կախարդ էր։ Զրադաշտը պատեհ ժամանակ համա-
րելով, ուզեց պատերազմ յայտարարել չար ողինե-
րին ու կախարդներին. այս ժամանակից սկսած կա-
խարդներն վերստին սկսեցին տրանջալ և մեքենա-
յութիւններ լարել դէպի նրա կեանքը։ Սակայն նրա
կենցաղարութեան հնագոյն ժամանակների նկա-

բագրութեան մասին աւանդութիւնը լուռում է. ինքն
ըստ ինքեան հասկանալի է, որ նրա կեանքի այս
աղօտ շրջանը բոլորովին մաքուր և անարատ է ե-
ղել, մինչև 30 տարեկան հասակը յարատեսում է նը-
րա դաստիարակութեան արուեստը, որից զկնի ար-
դէն սկսում են երեսն գալ նրա առաքինութեան
արգասիքները։

Բոլոր նախագրեալ պահնչելի գործերը պատմ-
ուում է մահմեդական պատուագիրների գրաւոր վաս-
տակների մէջ։ Զրադաշտի երիտասարդութեան մա-
սին գրեթէ ոչինչ չէ յիշատակւում Զենդավեստիայում։

Հստ երեսյթին Զրադաշտի վարդապետութիւնը
մի տոանձին յառաջադիմութիւն չունեցաւ իւր ծնն-
դավայրում, որովհետեւ Զրադաշտն որոշել էր թող-
նել իւր հայրենի քաղաքը և երթալ ուրիշ տեղ վաս-
տակերու իւր վարդապետութեանը մտերիմ կուսակից։
Թողնելով Արիյանա—Վէյնան, մարզարէն երկար ժա-
մանակ այստեղ-այնտեղ գեղերելուց յետոյ վերջա-
պէս եկաւ իւր աշակերտների հետ մի ծովի եզր,
որով հարկաւոր էր անցնել, Ոչ մի տեղ նաւակ չէր
երեսում. Զրադաշտն անվայել էր համարում թոյլ
տալ իւր աշակերտներին լողալով անցնել ծովի
միւս ափը, որովհետեւ նոցա հետ կային նաև աշա-
կերտուհիներ։ Մարդարէն խորին լուռութեամբ աղօթք
մըմնջալով ձեռքերը դէպի երկինք կարկառեց. այս
միջոցին բազմածուփ ծովը յանկարծ մէկ ուղի յոր-
դեց իրեն միջով և Զրադաշտն իւր աշակերտներով
հանգերձ հանդարսութեամբ անցաւ միւս կողմը յա-
տակի վրայով։ Նա երկար ժամանակ աստանդական
ճանապարհորդեց քարոզելով մինչև իրան սահ-
մանները հասնելն։ Այս աշխարհը ժամանելու միջո-

ցին, այստեղ մեծ խրախճանութիւն կար մի նշանաւոր տօնի առթիւ: Զրադաշտն այս յարմար հանգամանք համարելով, առանց տեղիք տալու ժողովրդին իւր ո՞վ լինելն իմանալու, ծպտած հազուստով մտաւ խրախճանքին մասնակցող դռոյթի մէջ: Խրախճանութիւնից զկնի դիշերը Զրադաշտը մի սոսկալի երազ տեսաւ, որ նախապէս զեկուցանում էր իւր վարդապետութեան յաւաջադիմութիւնն ունենալ իրանում: Նա տեսնում էր իրեն թշնամիներից բաղկացած մի հոյակապ խուժադուժ ամբոխ, որ շարժուել էր արևելքից, սոքա շրջապատեցին Զրադաշտի և իւր աշակերտների բոլորտիքը, բայց յանկարծ հարաւային կողմից իրեն պաշտպանելու համար նոր զօրք երևաց, որ ուժգին գրո՞ն տալով փախստական դարձրեց բոլոր թշնամիներին: Երազի մեկնութիւնը հասկանալի է, չար ոգիները պէտք է պատերազմեն նոր կրօնի ծաւալման դէմ, սակայն վերջ ի վերջոյ նոր վարդապետութիւնը յաղթող պէտք է հանդիսանար, իրեն դէմ մաքառող համայն տարերքի դէմ:

Զրադաշտի մարդարէնութեան գործունէութիւնը ակիզրն առաւ Խրանում: Ամասպանդ բարի ոգին ներկայանում է սրան և տանում է Որմիզդի¹³⁾ մօտ մի քանի իրերի համար, Որմիզդը թոյլտուութիւն է չնորհում Զրադաշտին մի քանի կարևոր հարցեր առաջարկելու իրեն: Զրադաշտի առարկած առաջի հարցն էր, թէ նախախճամութեան ստեղծագործութիւնների մէջ, ո՞րն է ամենալաւ և ամենագեղեցիկ արարածը: Որմիզդը պատասխանեց Զրադաշտին. «Ամենաազնիւ և ամենալաւ էակը մաքուր սիրտ ունեցող մարդն է»: Զրադաշտը հարցնում է հրեշտակների անունների և Անդրօ—Մանի բնութեան մասին:

Որմիզդը ցոյց է տալիս այս չար ոգուն դժոկվում: Սրանից յետոյ Զրադաշտն Աստուծուց նշաններ է ստանում. նա տեսնում է մի բարձրաբերձ հրաբորքը լեառն իրեն հանդէպ, նրան հրամայում են անցնել սրա վրայով, նա անմիջապէս այս պատուէրն է ի կատար ածում ողջ և անվթար մնալով: Այս բանից զկնի նրա փորոտիքը դուրս են տալիս և նորից տեղը դնելով, վերստին կարում են, վերջապէս այսպիսի շատ լլկանք հասցնելուց յետոյ պատում են նրա կուրծքը և լցնում են կրծքի խոռոչը հալած պղընձով: Սակայն նա ոչ մի դուզնաքեայ ցաւ չէր զգում և այս սոսկալի դէպքում: Այս բոլոր քստմնելի տեսաններից զկնի Զրադաշտի դաստիարակը բացատրում է իրեն վերոյիշեալ համայն հրաշքների դիտաւորութիւնը: Նա պէտք է բարձրացնէր ժողովրդին իւր նուաստ և անկեալ վիճակից, մարդս որ մեծապէս Ահրիմանի իշխանութեանը իւր յանցանքները քաւելու համար պէտք է անցնէ հրավառ լերտն միջով և թէ մեղսական մարդու մարմնից արեան ճապաղիքները պէտք է հոսեն, այնպէս, ինչպէս որ Զրադաշտի փորոտիքը դուրս տալիս հոսում էր:

Որմիզդը յանձնում է իւր անհատին «Զենդագիւատիա» յորջորջուած ս. գիրքը, պատուիքելով որ երթայ Վշատապ թագաւորի պալատը և այնտեղ քարոզէ այս նոր վարդապետութեան սկզբունքները: Այստեղ Զրադաշտին տրում է նաև ուրիշ հրահանդներ. սրան խորհուրդ են տալիս խնամք ունենալ զանազան օգտական կենդանիների վրայ, որին երաշխաւոր են հանդիսանում կրակը, ջուրը և տաճարը: Նրան նոյնպէս յանձնարարում է հոգալ մետաղների վրայ, որ չժանգուին, երկիրը չապականուի



արիւնով և ուրիշ անմաքուր և գարչելի նիւթերով. . .
այլ գուն գործի արդիւնաւորել նոցա: Հայութաւու
Զրադաշտի կենսագրութեան մէջ, Զրադաշտի
այս խօսակցութիւնը Ուրմղի հետ մեր առաջ հայե-
դինանում է ամենանշանաւոր և հնագոյն միջնավե-
պերից մէկը. Զենդավենտիայում յաճախ յիշատակու-
թիւններ է լինում սրա մասին, նոյնակա և ստէպ
ակնարկութիւններ մահմեդական պատմագիրներն
իրանց գրուածքներում: Հների մէջ նոյնակա աւան-
դական սեթենեթած պատմութիւններու թէ ինչպէս
Զրադաշտը մի քանի մարդագաներից սախուած հե-
ռացաւ մէկ բարձր սար, որ սակաւ ժամանակից
յետոյ բոցավառուեց: Զրադաշտ սարի գագաթից
իջաւ գնաց պարսից թագաւորի մօտ և յայտնեց
նրան, որ զոհարերութիւններ պէտք է բերել այն-
տեղ սրանից յետոյ Զրադաշտն այլ ևս չէ երեսում
մարդկանց և յարաբերութիւն է ունենում բարեկա-
մարդ միայն նոցա հետ, որոնք ընդունակ էին
ըմբռնելու իւր ճշմարիտ վարդապետութեան քարոզ-
ները և հաճութեամբ իրանց չըջաններում ծաւալե-
լու: Սրանից երեսում է, որ Զրադաշտի կենսագրու-
թիւնը բանահիւսող միջնավեպերի (érisode) մէջ շատ
դէպքեր բաց է թողած, չէ յիշատակած համարեա
այն բոլոր եղելութիւնները, որ նա կատարել է
Մարաստանում եղած ժամանակից: Մի առանձին
հետաքրքրութեամբ աւանդութիւնը կանգ է աւնում
նրանց Վշտասպ թագաւորի արքունիքի եղած ժա-
մանակից:

Վերջին ժամանակները չար ողիներից շատերը
ջանում էին զանազան միջոցներով գայթակեցներ
Աստծոյ ընտրեալին. մի անգամ նոքա եկան Զրա-

դաշտի մօտ և մտերիմ ձևացնելով իրանց, թափանա-
ձեցին նրան, որ հեռանայ «Զենդավեստիայից»:
Բայց Զրադաշտը նոցա դժուծ առաջարկութեանը
մեծ արհամարհանգով և անբաւականութեամբ պատ-
տասխանելով վախսատական արաւու «Զենդավեստիա-
յից» հանած խօսքերի արտաքերութեամբ: Վշտասպ
թագաւորի արքունիքում եղած ժամանակ նա հար-
կադրուեց գահու կոռու մէջ մտնել իմաստուն և
կախարդ պալատականների հետ, որոնցից երեսուն
հոգի մէկ կողմ էին կանգնած, իսկ երեսուն հոգի
միւս կողմը, սակայն յիրաւի նոքա բոլորն էլ յաղ-
թուեցան այս նորեկ մարդարէից: Զրադաշտի ան-
սովոր և մեհ իմաստութիւնը դէպի իւր ճշմարիտ
վարդապետութիւնն ունեցած անխախուտ հաւա-
տարմութիւնը Դարեն Վշտասպեանին իրեն գրա-
ւեց: Պալատական կախարդները վախենալով, թէ
մի գուցէ արքան թողնէ իւր առաջուայ կրօնական
հայեացքները և հակամիտք զրադաշտականութեանը,
սկսեց մեծ ատելութեամբ մախանք տածել, հայնոյել
և թագաւորի ականջին ամեն տեսակ զրպարտու-
թիւններ հասցնել Զրադաշտին արքունիքից հեռաց-
նելու դիտաւորութեամբ: Երկու օր անընդհատ շա-
րունակում էր սոցա բանակուիը և ամեն անդամ
Զրադաշտն էր յաղթող հանդիսանում: Այս պարա-
գաների մէջ վկրչապէս Զրադաշտը բոլորովին ակ-
ներմ դարձաւ թագաւորի մօտ և մտերմացաւ նրա
հետ նա կարգաց թագաւորի մօտ մի քանի հատ-
ընտիր կտորներ «Զենդավեստիայից»: Սակայն թա-
գաւորը թէպէտ և մոգական կերպով յափշտակուեց
Զրադաշտի քաղցրախօս ճուոմարանութեամբ և խե-
լացիութեամբ, այսուամենայնիւ չէր համոզւում

Նրա վարդապետութեան ճշմարտութեան լինելուն բարդաւորը սրան հետևող չփարձաւ, բայց և այնպէս առաջարկեց որ արքունիքում կաճառակից լինի իրեն. մարգարէն համաձայնուեց մի առ ժամանակ այստեղ մնալու: Բայց այստեղ ևս նա պէտք է տոկալ այն բոլոր պատուհամները և լկանքները, որ կրում էր իր թշնամիներից: Գիտնականները, որոնց նա յաճախ նշանակում էր իւր վարդապետութեամբ ամեն տեսակ ամբաստանութիւններ և լեզուագարութիւններ էին հազորդում թագաւորի ականջին նրա մասին և պատշաճ միջոցներ էին վրնարում նրան օգնելու համար: Սոքա Զբարաշտի դըռնաապանին կաշառելով՝ իւր տուն բերեցին իրեն բացակայութեան ժամանակ զանազան անսուրբ կենդանիների անդամներ՝ չան ու կատուի գլուխ և այլ իրեր ու դողեցին Զբարաշտի հանդերձների մէջ. այս խարդախութիւնը կատարելուց յետոյ, յայտնեցին թագաւորին, որ նա կախարդ է: Թագաւորը մեծապէս ցասման մէջ ընկաւ, կրբ իմացաւ, որ իրօք Զբարաշտի մօտ գտնուել են միայն կախարդներին անդ անսուրբ նիւթեր, ապա հրամայեց իւր ծառաներին, որ իսկոյն բանտարկեն սորան, որ և չուտով կատարուեց: Ժամանակ էր արդէն որ Զբարաշտն իւր կատարած սքանչելիքներով ակնյայտնի կացուցանել իւր Աստուածութիւնից ուղարկուած լինելը: Թագաւորը մէկ մեռակ նժոյդ ունէր, որին ստէպ նշանակում էր փայփայելով: Մէկ նորագ ձիապանը գալով ախոռատուն մնաց ապշած ու զարմացած, տեսնելով որ ձիու չորս սոտքերը ներմուծուել են ամբողջապէս մարմինը: Սարսափած ձիապանը փութեաց թագուհիի մօտ և պատմեց արկածը. այս

բանը թագաւորը լսելով հապճէպով շտապէց ախոռատուն, կանչել տուեց բոլոր նշանաւոր իմաստուններին դարմանելու ձիուն, սակայն ամենեքեան ապիկար դժուացացան այս դործում. Այդ ժամանակ Զրադաշտը տխուր նստած էր բանտում և խսկապէս իրողութեան մասին ոչինչ չէր իմանալ, եթէ բանտապետն այս օրը, որ գործից ազատ էր արտասովոր գէպքի աղագաւ, չէր մոռացել կերակուր բերել նրա համար: Երեկոյեան Զրադաշտը հարցը բանտապետից այսօրուայ ճաշի յապաղեցնելու պատճառը և արքունիքում տեղի ունեցած իրարանցումի մասին. բանտապետը հարևանցօրէն նկարագրեց եղելութեան էռթիւնը: Զրադաշտը լսելով այս հրաշքը թախանձեց ժմանքով բանտապետին, որ վերջինս երթայ արքայի մօտ և ասէ նրան որ ինքը պատրաստ է մի քանի յայտնի պայմաններով օգնութիւն հասնել նրան իւր ապաբախտութեան մէջ: Թագաւորը բանտապետի խօսքերը լսելուց զկնի անմիջապէս դրանիկ առաքեց Զրադաշտին կանչելու իր մօտ: Զրադաշտը շուտով վեր կացաւ եկաւ դրանիկի ուղեկցութեամբ: Թագաւորը հարցը Զրադաշտին թէ բնչ է իւր առաջարկած յայտնի պայմանները: Զրադաշտը ձիու ոտքերի համեմատ չորս պայմաններ արձակեց թագաւորին— առաջին պայմանը որ նա՝ Վշտասպը պէտք էր անկերծօրէն և յաւերժապէս հաւատար իւր մարդարէական քարոզութիւններին և կրօնի աստութեանը. երկրորդ՝ թագաւորի որդին այս նոր վարդապետութեանը ջերմ ջատագով պէտք էր հանդիսանալու. երրորդ՝ որ թագուհին պէտք էր ընդունէր և ճանաչէր այս նոր կրօնի գերադասութիւնը. և վերջա-

պէս չորրորդ՝ յորս քորործերը, որոնց առողջ թիւ ինքը բանտ էր նստել պէտք է վերաքննում էինք Ամեն անգամ թափաւորը իր որդին և բամբիշլ հէնց որ ցանկութիւն էին յայտնում նրա առաջարկը կատարելու, զիոն մէկ առաջ բժշկում էր անելով պակենապիշական ամսացեց, որ Զրադաշտի վրայ արած բողոքները և ամբաստանութիւնները նախազորշած զըպարտութիւններ են եղել, որ բազմաթիւ թշնամինները կանխամտածութեամբ են թափել նրաւտունը նոյնալիսի անհեթեթ կինդանինների դէշեր և այլ նիւթեր։ Թագաւորի ճրամանով չարագործները պատժւած են, իսկ Զրադաշտն առաջին մարդն է դառնում արքունիքում։ Քիչ ժամանակից յետոյ Զրադաշտի հեղինակութիւնը և մտերմութիւնը դէպի թագաւորն այնքան է բարձրանամամ, որ վերջինս առանց նրա անմիջական խորհրդին համարեաւ ոչինչ չէ կատարում։

Զրադաշտն երից ամուսնացաւ և երեք որդի ունէր։ Սյու երեք որդիներից, ըստ աւանդութեան, առաջ եկան քրմերի մարտիկների, և գետաներկերի երեք դասակարգը։ Զրադաշտի մահուան մասին պատմագիրների միջոցով շատ քիչ տեղեկավիւն հասաւ մեզ։ Յունաց պատմաբաններն աւանդում են, որ նա Զրադաշտն երից ամուսնացաւ և երեք որդի ունէր։ Սյու երեք որդիներից, ըստ աւանդութեան, առաջ եկան քրմերի մարտիկների, և գետաներկերի երեք դասակարգը։ Զրադաշտի մահուան մասին պատմագիրների միջոցով շատ քիչ տեղեկավիւն լաւագոյն յոյսերից։ Սյունէետե Անուբանգական կինքնեց Զրադաշտին վայրկենական համատեսութիւն, ամենագիտութիւն և ցոյց տուեց երջանկութիւնը և դժոխքի տանջանքները, որից յետոյ Զրադաշտը յայտնեց Անուբանգական, որ սորա աշխարհում կարգադրած տնօրէնութիւնը բոլորովին իրեն հաճելի և համակըելի է։

Յունաց պատմաբաններն աւանդում են, որ նա Զրադաշտն երկնային հրով հետաջինչ եղաւ և վերացուեց յետոյ երկինք, մինչդեռ արեւելեան յայտնի մաստենագիրներն աւանդում են յայտնի, որ նա վախճանուել է 77 տարեկան հաշուակում, որանք էլ զրուցաբանում են, որ նա սպանուել է իրանական Արքանուակ թագաւորի և իր փոքրի քաջութեամբ Բալքա մայրաքաղաքի պաշար-

ման ժամանակի, Տուրքերատուր անունով մէկ զինուորի ձեռքով, որ ուժի զօրութեամբ մտաւ տաշարը և այստեղ սպանեց մարգարէին։ Հաղիւ թէ այս ենթադրութիւնը — L'est une histoire — այնքան էլ հնագոյն լինի, գոնեա մըջնադարեան իրանական պատմագիր «Բունդեզելը», որին մենք սլարտական ենք իւր այնքան մեծագանձ պատմական տեղեկութիւններ հաղորդելու համար, ասում է, որ Զրադաշտը Աշտասակին իւր կրօնին գարձնելուց յետոյ վերագարձաւ իւր ծննդակայրը։ Բունդեզէի հեղինակն ինքն իրեն հարց է առաջարկում թէ ինչու այսպիսի գօննամիտ մարդը, որպիսին Զրադաշտն էր, պէտք է մեռնէր և յարում է թէ Զրադաշտն Աստրծուց անմահութիւն խնդրեց, սակայն պատասխան ստացաւ, որ եթէ իրեն անմահութիւն չնորհուի, այն ժամանակ ինքն ևս ստիպուած կինի չար Տուրքերատուրին չնորհել, այլապէս երկրային եղծանելի կեանքը չէ կարող լինել և մարգիկ զըկուած կինին լաւագոյն յոյսերից։ Սյունէետե Անուբանգական կինքնեց Զրադաշտին վայրկենական համատեսութիւն, ամենագիտութիւն և ցոյց տուեց երջանկութիւնը և դժոխքի տանջանքները, որից յետոյ Զրադաշտը յայտնեց Անուբանգական, որ սորա աշխարհում կարգադրած տնօրէնութիւնը բոլորովին իրեն հաճելի և համակըելի է։

Անաւասակ Զրադաշտի կեանքի սլարտականների ընդհանուր կետերը, որոնցով նա ներկայանում է մեզ իւր վրայ բանահիւսած առասպելի մէջ։ Արծեն չկայ, որ Զրադաշտի անձնաւորութիւնը, ինչպէս և արմատական կրօնների մեծամասնութիւնը չեն կարող լիովին պատմական համարուել։ Ոչ Զրա-

գաշտի իսկական ծննդատեղին, ոչ իւր անուան նշանակութիւնը և ոչ ևս իւր կեանքի թուականը (έροοε) ցարդ բանասէրները չկարողացան պարզապէտ բացատրել թէսէտ և երբեմն փորձեր են եղել արևելագէտների (orientaliste) կողմից մերձաւոր ճշութեամբ որոշելու; Սորա կենսագրութեանն ամենից շատ հակասող են հանդիսանում հնադարեան արևմտեան պատմագիրները; Վերջին ժամանակներս մի քանի գիտնականներ բոլորովին ժըլտեցին Զրադաշտի մասին եղած առասպելի պատմական պատուանդանը և նմանեցրին սրան արեգակի աստուածութեան հետ: Մեկնաբանելով կենսագրութիւնը, որպէս արեգակնային ծխսակատարութեան կամ երկրագրութեան առասպեկներից մէկը: Սակայն այս տեսակ հայեացքները և դատողութիւնները, պէտք է խոստովանուել, որ իւրեանց ակնյայտնի միակողմանի լինելովը, չեն կարող հաւաստիք ճանանչուել, որովհետեւ չունեն բնաւին գիտնական անխախուտ հիմք: Առաւել հաւանական ենթադրութիւն է, որ Զրադաշտի վրայ բանահիւսած այս առասպեկն աւելի անդան ժամանակներում է կազմուել և Բուդդա-Սակիխ-Մունի կենսագրութեան պէս ժամանակի ընթացքում ժողովրդի մէջ սեթենեթել է զանազան ինքնամտածական կեղծ ու պատիր պահոյներով: Չէ կարելի անուշադիր թողնել այն հանգամանքը, որ Զրադաշտի և Բուդդայի կենսագրութեան մէջ մի քանի համանմանութիւններ են աչքի ընկնում. սորքա երկուսն ևս արքայական ցեղից էին, երկուսն ևս շատ վաղ ընդարձակ լուսակութիւններ ցոյց տուեցին և 30 տարեկան հասակում քարոզչական գործունէութեան

ասպարէզ դուրս եկան: Մարօ գիտնականը Բուդդայի առասպելի մէջ, որում պատմուած է նրա չարոգիներից փորձութեան մասին շատ մեծ նմանութիւն է գտնում Զրադաշտի առասպելի հետ, որ բովանդակում է Զրադաշտի դեերից փորձութիւլը:

Աւելի հիմնական ապացոյց, որ Զրադաշտն իրօք պատմմական անձնաւորութիւն է եղել, անկապակած նրա կրօնը կարող է ծառայել, որ ներկայանում է մեր առաջ մի այնպիսի կրօն, որի այնքան խիստ ներդաշնակակերով և վաեմ սխառեմը կարող է ստեղծել միայնակ բնութիւնից օժտուած բարձր մարդու հանճարը: Սակայն ճշմարտութիւնը պահանջում է խոստովանուել, որ Զրադաշտն օգտուել է նաև իրանից առաջ գոյութիւն ունեցող ժողովրդի շրջաններում տարածուած մանր մունը կրօններից, որ նա ժողովեց, ձուլեց և շատ բաներ կապելով ու վերադնելով մի ամբողջ մարմին կազմեց:

Զրադաշտի կենսագրութիւնը հարևանցօքէն նկարագրելուց դինի մի փութանցիկ տեսութիւն ձգենք նրան վերագրած կրօնի վրայ: Զրադաշտի գործունէութեան մէջ հասած անդուզական և ամենամեծ յիշատակարանն իւր կրօնն է, որ աւանդեց հետագաներին: Այս կրօնի վաեմութիւնը դասում է նրան առաջնորդաւոր անհատների շարքը, որոնցով մարդկային ազգը հպարտանում է այսօր: Իրանական այս կրօնը ջանք և ճիգ է թափում, որի հիմնադիրը Զրադաշտն է համարւում, հնութեան ուրիշ կրօնների պէս խորը թափանցեց ստեղծագործութեան խորհրդի մէջ, պարզաբանելու և բացատրելու նրա պատճառները, հետազոտելու մարդկութեան սկզբանական ծագումը, գուշակելու նրա ապագայ վիճա-

կը և վերջապէս մարդու դէպի բարձր էակները՝ չար
և բարի ողիներն ունեցած յարաբերութիւնները
ստուգելու: Բայց իրանական կրօնը մօտենալով այս
կնճռոտ խնդիրների լուծման, երբ հարց է առա-
ջարկուում մի անսովոր զգօնամտութեամբ այս հիմ-
նական ալարագաների նկատմամբ, որոնց ներկայու-
թեամբ մարդու և աշխարհի գոյութիւնը միայն կա-
րող է լինել:

Այս ալարագաները՝ «ժամանակը» և տարածու-
թիւնն, է, կարծես թէ զրադաշտական վարդապէ-
տութեան հաստատման էական տարերքը սոքա են
հանդիսանում: Այստեղ՝ «ժամանակը» և տարածու-
թիւնը ասելով հասկացում է անվերջ՝ «ժամանակի»
և անվերջ տարածութեան իմաստով: Այս տարեր-
քը գերագասուում է նրա վարդապէտութեան ո՞չ զ
համայն արարածներից և իրերից սրակս մեծ աս-
տուածութիւններ: «Մեծ և անհուն ժամանակը ան-
հաշտ և անսողոք բնութիւնը, մի այնպիսի մեծ նշա-
նակութիւն ունի իրանցու համար, որի վերջնական
վճռման դէմ ոչ ոք մահկանացու արարածներից չէ
յանդգնիլ կանգնել: Նրան չէ կարելի գթաշարժել
ոչ առատ զոհերով և ոչ ջերմագին աղօթքներով,
որովհետեւ նրա դատերն անյեղյեղուկ են և վերջ-
նական են: Իրանց գաղափարն սոյնպիսի բնաւորու-
թիւն ունի և անծայր տարածութեան վրայ, այսինքն,
որ նա բնաւորութեամբ ևս անյոյզ և անկիրք է, դիւ-
րահակ չէ ոչ մի թախանձանքի, և աղօթքի: Բայց
յիշեալ գլխաւոր աստուածութիւններից, Իրանի ժոռ-
դութիւնի համար երկրպագելի էր նաև տարուայ ա-
միսները մինչև անգամ, և օրերի ուրոյն աստուա-
ծութիւնները, որոնց կարելի է զոհաբերութիւններ

անել և կեանքի դժուար դիպուածների միջոցին օգ-
նութիւն հայցել: Ումար զայ ոչ ջնի վմօվ խօսքի
լոյ Յոյց առուած էականապատուածութիւններին
աւելանուածնեն նաև երկու ուրիշ աստուածութիւն-
ներ, որոնց թագաւորութիւնը համարեանոյնպիսի
կերպարանք է կրում: Սոցանից առաջինը յորդոր-
ւում է անծայլ լոյս, որ ներկայացնում է բարի
աստուածներին իրեն մէջ պատուալուող բնակարա-
նը, իսկ երկրորդ, սրպէս հակադիր առաջինին կոչ-
ւում է բացարձակ խմւար: Այս աստուածութիւններն
իրանցու հասկացողութեամբ սահմանափակում են
անձուն տարածութեան մէջ որոշ կոպարներով և
անջատուած են, միմեանցից մի մեծ անապատով:
Լոյսի և խաւարի ներհակութեան ու թշնամու-
թեան գաղափարը, որոնց յետին ժամանակների
ընթացքում գցեցին նաև քարու և չարի, կոխւ-
ների գաղափարը, Զրադաշտի վարդապէտութեան
անհուն տարածութեան և ժամանակի, հետ միասին,
էական սկզբունքն է հանդիսանում և նրա մէջ մը-
շակում է մեծ նետեղականութեամբ ու զօրու-
թեամբ, թէպէտ և գրա գաղափարը գոյութիւն ու-
նի ննդօգերմանական բոլոր կրօնների մէջ, նոյն-
պէս և աէմիտական կրօնների մեծամանութեան
մէջ: բայս մարտնչուի լոյ յունա և յախան լոյ

Ուրեմն, Զրադաշտի վարդապէտութեան այս
պէս առած պատուանդանի վրայ դրած է մի քանի
արմատական (radical) աստուածութիւնների սկզբ-
քունքների գաղափարը, առանց որոնց անկարելի կլի-
ներ երևակայել ամենքերի գոյութիւնը: Սակայն այս
աստուածութիւններն իրանց էութեամբ անորոշ և աղ-
ջամդային են. հազիւ թէ ժողովրդի մտաւոր անդաս-

տանին կարողանային մատչելի վենել, որ մեծայոյս
կերպով կրօնի մէջ էր իւր ցաւերին սփոփանք և
անձուկ օրերին ապաշտպանութիւն փնտրում, իսկ
աստուածների կարողութեան մէջ—օդնականներ և
պաշտպաններ իրեն որևէ վշտի և թշուառութեան
ժամանակ: Աստուածների և հոգիների լայնատարած
աշխարհը բաւականութիւն է տալիս միայն նոցա
թախանձանքներին, որոնք Զրադաշտի վարդապե-
տութեան սկզբունքով անմիջապէս արմատական
աստուածութիւնների յետևից են ընթանում:
Այս աստուածութիւնները բաժանւում են եր-
կու գլխաւոր սուր հակադիր կուսակցութիւնների՝
բարիների և չարերի կամ, աւելի ճիշտն ասած, բար-
ձը հոգերի և նուռաստ աշխարհային նիւթեղէն
սկզբունքի, սոքա համապատասխանում են լոյսին
և խաւարին: Հոգու և նիւթի այս հակաբանակ ներ-
կայանալ արդէն գոյութիւն ունէր Հին-Արիական
շրջանում (régiode) և սորա նշմարներն ի միջի այ-
լոց կարելի է գտնել հին հոգիկների «լեդա» ա-
սուած սրբազն մատեանում: Ակներն է, որ Զրա-
դաշտին մնում էր միայն, ինչպէս այս հանգաման-
քում, նոյնպէս և ուրիշներում, իրանից առաջ ժո-
ղովրդի մէջ գոյութիւն ունեցող կրօնական նիւթե-
ը մշակել և ձուլել ի մի վերջնական տարած տա-
լու համար:

Բոլոր բարի և լուսաւոր աստուածութիւնների
գլխին կանգնած է Ահուրա-Մազդան կամ Որմիզ-
դը, որին «Ձենդավեստիան» զգօն առաքինի և զօ-
րաւոր պետ է յորջորջում: Սա իւր ամենակարող
զօրութեամբ ստեղծեց աշխարհս համայն արարած-
ներով և իրերով, երկրիս վրայ կեանք ու մահ տուող

և ամեն տեսակ՝ առաքինութիւններ մատակարարող
էակ էր հանդիսանում իրանցու աչքում: Ահուրա-
Մազդան բոլորովին հոգերու տաստուածութիւն է, որ ոչ
մի ընդհանուր կար չունի արիականների տարրեղէն
աստուածութիւնների հետ: Ոչ մի արիական կրօնի
մէջ չէ կարելի գտնել մի այնպիսի աստուածութիւն,
որ մաքրութեան և վեհութեան կողմից գոնեա փոքր
նմանութիւն ունենայ նրա հետ: այս պարագան ա-
ւելի չուտ կարելի է ենթադրել սեմական աղեցու-
թեանը: Ճշմարիտ է, Ահուրան մարմին ունէ, բայց
երկրային չէ, այլ նուրբ և աստուածային է և թէ-
պէտ երբեմն սրան աստուածների հայր են անուա-
նում, սակայն իսկապէս, այս կոչումը պէտք է հաս-
կանալ այլարանական իմաստով և ոչ իրական կամ
ընտանեկան:

Ըստ ամենայն հաւանականութեամբ նախնական
ժամանակներում Ահուրա-Մազդային չէին ձեացնում
մարդու պատկերով, այլ միայն յետին ժամանակնե-
րում իրանցիները փոխ առան այս սովորութիւնը
բարեւացիներից իրանց աստուածներին աւելի որոշ
կերպարանք տալու համար, որոնք թևաւոր շրջանի
մէջ էին զետեղում: Ահուրա-Մազդային շրջապատում
էին ամասպանդ անուանուած բարի ոգիները, որ
թուով 7.ն էին: Սկզբնական ժամանակներում, գու-
ցէ, այս աստուածութիւններն և տարրեղէն բնասո-
րութիւն ունէին, բայց վերջերում այսպէս ասած,
հոգիացան: Այս հոգիներից մէկը զգօնամտութեան
ներկայացուցիչ է հանդիսանում, երկրորդը՝ ողոր-
մութեան, երրորդը՝ արդարութեան, չորրորդը՝ աս-
տուածային հշմարտութեան և այլն: Սոքա բոլորն

և ամեն տեսակ առաքինութիւններ յմատակարարող
էակ էր հանդիսանում իրանցու աչքում։ Ահուրա-
Մազդան բոլորովին հոգեոր աստուածութիւն է, որ ոչ
մի ընդհանուր կապ չունի արիակաների տարրեղէն
աստուածութիւնների հետ։ Ոչ մի արիական կրօնի
մէջ չէ կարելի գտնել մի այնպիսի աստուածութիւն,
որ մաքրութեան և վեհութեան կողմից գոնեա փոքր
նմանութիւն ունենայ նրա հետ։ այս պարագան ա-
ւելի շուտ կարելի է ենթադրել սեմական ազդեցու-
թեանը։ Ճշմարիտ է, Ահուրան մարմին ունէ, բայց
երկրային չէ, այլ նուրբ և աստուածային է և թէ-
պէտ երեմն սրան աստուածների հայր են անուա-
նում, սակայն իսկապէս, այս կոչումը պէտք է հաս-
կանալ այլաբանական իմաստով և ոչ իրական կամ
ընտանեկան։

Ըստ ամենայն հաւանականութեամբ նախնական-
ժամանակներում Ահուրա-Մազդային չէին ձեացնում
մարդու պատկերով, այլ միայն յետին ժամանակնե-
րում իրանցիները փոխ առան այս սովորութիւնը
բարելացիներից իրանց աստուածներին աւելի որոշ
կերպարանք տալու համար, որոնք թեաւոր շրջանի
մէջ էին զետեղում։ Ահուրա-Մազդային շրջապատում
էին ամասպանդ անուանուած բարի ոգիները, որ
թուով 7-ն էին։ Սկզբնական ժամանակներում, գու-
ցէ, այս աստուածութիւններն և տարրեղէն բնաւո-
րութիւն ունէին, բայց վերջերում այսպէս ասած,
հոգիացան։ Այս հոգիներից մէկը զգօնամտութեան
ներկայացուցիչ է հանդիսանում, երկրորդը՝ ողոր-
մութեան, երրորդը՝ արդարութեան, չորրորդը՝ աս-
տուածային ճշմարտութեան և այլն։ Սոքա բոլորն

Աս Ահուքա-Մազդայի ամլասանւորներնեն և նրա ընկերները: Եւ այցա արմադի և ամառավանդանը ու ինչ Ահուքայի հրամանով տոքա առաքինութիւնան ուրիշ բարեմասնութիւններ են մատակարարում ժողովրդին, մարդկանց գերծ են պահում բոլոր վաստամայի վարդերից և օգնականներին հանդիսանում նոցա չարերի կամ խաւարի դէմ եղած երկարատև ապատերազմի մէջ: Այս մեծ աստուածութիւններից զատ, իրանական կրօն յօրինել է նաև այլ բազմաթիւ լուսաւոր և բարի աստուածութիւններ, այս խմբին կարող են պատկանել «եաջար» յորջորջուածները, որ աւելի նիւթեղէն թագաւորութիւն ունեցող աստուածութիւններ են: Սոցա յարգանքը ակիզըն է առնում այն հնագոյն ժամանակներից, որի շրջանում արիական ժողովուրդները տակաւին կենցաղավարում էին հասարակաց մեծ ընտանիքով: Այս խմբի աստուածութիւններին մէջ նա աւելի բարձր նշանակութիւն ունի, որ ընդունակութեամբ օժտուած է կրակին փոփոխապէս մարմնացումն տալու պանազան թևերով: Սկսած Ահուքայի սպասաւորների աստուածային շողազումից մինչև երկրային, մարդուն բարերար հանդիսացող և բոլոր անմաքուր բաներ հետաջին անող կրակը: Կրակին երկրապատութիւն տալը և մեծապէս յարգանք տածելն, ըստ ամենայն հաւանականութեան առաջ է եկել շատ վաղ ցոլատմական ժամանակներում: այս երեսի ընդհանուր էր հնդիկների և պարսիկների համար: Այսպէս անուանուած երկրային հուրը մի առանձին յարգանք էր վայելում հնդիկների մէջ, որ աւանդութեան պատմելուն նայելով երկնից վայր իջնելով յարդ այրվում է

մըբազան լեռների կտտաբրների վրայ: Ի պատմի սրա, պարսից նշանաւոր արքայից-արքաների ժամանակ Պարսկաստանում կառուցուեցան հոյակառ և չքեղատեսիլ տաճարների, այսպէս օրինակ յայտնի է դարեան վշտասպեանի ջանքով կառուցած տաճարները: Պէտք է ասել, որ զրադաշտականները միւս բայոր աստուածներին և սրբազն էին համարում, որքա իրանց սեպուհ պարտականութիւնը համարելով ուշի ուշով հետևում էին, որ նուիրական կրակը ոչ մի բանի չկաչէ, մանաւանդ դիակի: Անկասկած պարսիկներն իրանց վառ երեակայութեան մէջ աստուածներին պատկերացնում էին մարդու կերպարանքով: Սակայն պարսից կրօնի մէջ ընաւ չէ նշմարուում այն փայլուն, գեղարուեստական աստուածների պատկերանկարութիւնը, որ կազմում է յունաց դիցարանութեան բնորոշ յատկութիւնները մեծ մասամբ: Իրանի ժողովուրդը կրակի հետ միասին պաշտում էր նաև «զուրբ», ինչպէտ հնդկա-գերմանական շատ ուրիշ աղդութիւններ: Զրի Աստուածը պատկերանում էր որպէս պաղացրդութիւն մատակարարող, սա իր զօրութեամբ ծովերի և ամպերի գիտութիւնը մարմնացնում էր: Սա հանդիսանում էր իրեն մտորապետալ գետերի, առուակների, լճերի, աղբերների աստուածուհիներով շրջապատուած մի մեծ և ականածու աստուածութիւն, որին ծովերի վերայ ման էին ածում քաջընթացիկ և անզուսպ ձիաները: Այս բոլոր երեսի թիւները թէպէտ խառ ի խուռն զեերի մէջ են ներփակուած, յիշեցնում են յունաց Պօսիդոնին, որ ներէիդների և տրիտոնների ուղեկցութեամբ ձանապարհորդում էր ծովերի վերայ, ծովի պալքներից ստեղծած իր կտրուկ ձիու վերայ նստած:

Մի զարմանալի բան, որ Զրադաշտի վարդապետութեան մէջ, այս մաքուր արեական ծագում ունեցող աստուածների շարքում, տեղ-տեղ պատահում էին սեմիտական ասորա-բարելական Անահիտի անունը ևս, որ ջրերի, պտղաբերութեան, ամուսնութեան և որդերերութեան աստուածուհին էր։ Այս աստուածունու պատմիքը պարզ, որու և զրալի էր, սրա մենանը և դէպի իրեն-մատուցանելի պաշտամունքը (culte) բոլորովին նմանութիւն չունի իրանական աստուածների մենաներին և պաշտամունքներին, որով ակնյայտնի ցոյց է տալիս նրա օտար ծագում ունենալը. ըստ ամենայն հաւանականութեան սրա յարգանքը սարսափելի տարածուած էր Իրանում ցգալն Զրադաշտի, որ կամայ ակամայ ստիպուած էր մուծել իւր դիւցաբանութեան մատեանում սրա անունը ևս։

Միզգափզմը, այսինքն Զրադաշտի վարդապետութիւնը, բացի վերոյշեալ աստուածութիւններից՝ աստուած է ճանաչում նաև «ըուսնին» և «արեգակին» գոգիսի ուրիշ նշաններին և լուսնի ճանանշափայլ հոգիներին. սոքա միասին բնութեան մէջ անյաղթ պատերազմի մէջ են լինում չարի և խաւարի դէմ։ Բարձրագոյն փարկ ու նշանակութիւնն ունի նաև «Միթրան», որ հին արեականների արեգակի, լուսնի և միենոյն ժամանակ ճշմարտութեան ու արդարութեան աստուածութիւնն էր, կամ ինչպէս «Ճենդավեստիան» անուանում է սրան այլապէս «զօրաւոր», յաղթանակատար, հազար աչք և հազար քիթ ունեցող և դաշինքների պաշտապանող «Միթրա», Զրադաշտի վարդապետութեան ասելով, Միթրան ստեղծուել է Ահուրա. Մազդայի ձեռքով մարդ-

կանց միջնորդ և յաղթանակատար պատերազմող լինելու խաւար ուժերի դէմ։ Միթրային տածած յարդանքը, Անահիտին երկրաբարձութեան պէս, իրանական ստեղծագործութեան արդասիք չէ, այլ սրա վրայ պէտք է նայել որպէս ժառանգութիւն, որ անցել է Զրադաշտի ձեռքը պարսից նախնական հնագարեան ընդհանուր կրօնից։ Ժամանակի ընթացքում Միթրային տածելի յատակ և հոգեոր պաշտամունքի հետ միացաւ, որ տարածուած էր բովանդակի Իրանում նաև սեմիտական բիրտ այլ տարերք, և այսպիսի կազմակերպութեամբ այս պաշտամունքն Քրիստոսի ծննդից յետոյ արդէն տարածուած էր արևմտեան Եւրոպայում, ուր և յետոյ ձեռք բերեց պատկառելի ժողովրդականութիւն։ Զրադաշտի վարդապետութեան մէջ յայանի բարի աստուածների շրջանում ամենաշատ ակնախնդիրները սոքա են, որ մասամբ ստեղծուել են հէնց Իրանով, մասամբ ամբողջովին վերցրուած է ժողովրդի կրօնից և ուրիշներն էլ ծագումով եկամուտ են։ Սակայն սրանով չէ սահմանափակվում իրանական դիցաբանութիւնը, ուրանցից զատ նոյնպէս յարգանք էին վայելում բազմաթիւ «արդարութեան ճատագով», երկրին բարդաւածութիւն ձօնող աստուածութիւններ, հոգիներ, կորովի զիւցազներ և վերջապէս իրանց սխրագործնախնիների հոգիներ և ուրիշ այսպիսի շատ իրեր։ Բոլոր այս բազմազիմի աստուածութիւններն իսկապէս իրանական կրօնի մէկ կողմն են կազմում։ Սոցա հիմքը խստասիրտ և անդուլ կոփւն է հանդիսանում լուսաւոր և խաւար, բարի և չար, արդարութեան ու ստութեան ուժերի դէմ։ Շատ հաւանական է, որ իրանական կրօնի մէջ չար դևերը դարձեալ

այնպիսի ականաւոր դեր են խաղացել, ինչպէս առ քարի աստուածութիւնները: Սակայն մեզ համար աւելորդ բան կլինէր «Զենդավեսիայի» էլեղում վիճակը չար հետևազների և բոլոր չար դեերի համարանք քը, որովհետեւ «Զենդավեսիայան» առաւելատիչս նըր վիրուած է բարի աստուածութիւններին և սոցա վը բայց կատարելի ծէսերի մեկնաբանութեանն, իսկ իսաւար աշխարհի և սրա զաւակների մասին շատ հարբեանցի է խօսում: Բարի հոգիներն, ինչպէս արգէն յայտնի է, կեռնում են յաւիտեան լոյսի բնակարանում, բայց չար ողիների և դեերի կացարանում թագաւորում է յաւիտեանական խաւարը, մի այնպիսի բարձրափիտ և բնաւ, անթափանցելի խաւարը, որին ձեռքերով կարելի է խարխափել: Այս մեջին աղջամղջային բնակարանը դժոխիքն է, որ գտնուում է երկրիս մակերեւոյթի ներքոյց, դէպի ուր չար դեերի գլխաւոր Անգրո Մայն'ուսը մի մեծ ական էր փորել առաջնորդ, որտեղից դեերը գուրս են գալիս աշխարհի մերայ չարիք և դժբաղդութիւն սերմանելու: Մինչ Զբաղաշտի գալը սոքա աստանգում էին երկրիս բոլոր մասերում, սակայն Զբաղաշտի վարդապետութեան հրատարակելուց սկսած ստիպուեցան դօդուել երկրիս այլ և այլ փապարներում, վիհերում և անձաւներում սկսեցին խիստ հալածման ենթարկուել մարդկանց կողմից, կուուել սոցա հետ, որոնց յամթութիւնը ժամանակի հարցն էր:

Չար ողիների բարձրագոյն պետը, սոսկալի Անգրո Մայն'ուսը, խաւարի թագաւորութեան մէջ հրամաններ առուղին է և չարարար դեերի ստեղողն, ինչպէս Անուրա-Մազանը բարձրագոյն էր:

Մայն'ուսը կատարեալ հակառակուերն է Անանդիսանում Ահուրին, որովհետեւ Ահուրան յաստիչ է, պարզկատուած և կեանքի պահապահն է, ընդհակառակը Անգրո-Մայն'ուսը ամեն լաւ բանի քանդողն է: Ահուրանյար և համապապ կար, է, և այէտք է լինի, նայաւերժական է: իսկ նրա թշնամին թէպէտ և հնագոյն ժամանակներից պոյութիւնը ունի, սակայն կլինի ժամանակ, որ և վերջնական կերպով յաղթայարուած կ'անյայտանայ ընդ միշտ: Նրա դործունէութիւնն ինքնաստեղծ չէ, նաև ստեղծող չէ, նորոգիչ չէ, այլ ձգտում է խալստել Ահուրայի համերաշխամութիւնը և տիեզերքի ներդաշնակ: Կարգադրութիւնը, որ Ահուրան է սահմանել:

Անգրո-Մայն'ուսին, ինչպէս և Ահուրա-մազգային, շրջապատում էն իւրաստորագրեալ հոգիները՝ դմերը, որոնցից վեց հոգի գլխաւոր հրամանատարներն են միւսների նկատմամբ: Սոքա վերօյիշեալ Ամասպանդ կոչուած հոգիների հակառակուեր դեր են կառարում: Նոցա միակ արհեստն է աշխարհում չարիքներ, ներքին երկարաւակութիւններ, գժտութիւններ և նենդութիւններ ցանելը մարդկանց մէջ ոչնչացնել արդարութեան և ճշմարտութեան աէրը, և բանական արարածներին որբան կարելի է խստորել դէպի վեհն ու գեղեցիկը, բարի և առաքինի ունեցած նպատակից: Թախծալից դէմքերը, պատրիչ զգացմունքները և կասկածաւոր սրտերը նոցա տրամադրութեանը մեծապէս նպաստում են բերկունքի ովկեանոսի մէջ ընկրմելու: Սոքա արմատացնում են թագաւորների սրտում բանակարտութեան զգացմունքներ և նկրտանք, ներշնչում են նոցա յուի և անօրէն դիտաւորութիւններ, քայքայում են նոցա պայա-

կիտութեան տնօրինած կարգն ու կանոնը և վերջապէս մարդկանց մէջ զարգացնում են խստարտութիւն, խաբերայութիւն և ամբարտաւանութիւն։ Միւս դեերը խաւարի թագաւորութիւնից աշխարհ են քերում երաշտութիւն, չորութիւն և պաղ հողմեր։ Բացի սոցանից կայ և մի այլ գանձակարգ, որոնց գործն է, գրգռել անձնաւորութիւնների մէջ յիմար և ապերասան ցանկութիւններ, ապստամբ և գերանենդ մտքեր, ապականիչ և յանցաւոր կրքեր և այսպիսի յոդնաթիւ ուրիշ գծում միտումներ։ Կան նաև կին դեեր կամ «պերեբ», որոնցից ամենազօրաւորը հանդիսանում է էլենա, անուանուածը, որ մահուան նմանութեամբ և չար գեերի յաստիչ էակն է ներկայանում իրանցու համար։ Միւսները, որ ուզլակի չար կախարդներ են, յուղում են մարդկանց սրտերը զանազան հմայութիւններով և երբեմն էլ սատանայական, մոդական գեղեցկութեամբ։ Այսպէս երկու գլխաւոր սկզբունք կային, որ տիբապետում էին ժողովրդին։ Նոքա իրանց էութեամբ ներհակ լինելով՝ թշնամակսն յարաբերութեան մէջ էին գտնւում միմեանց դէմ շարունակ, նոցա պատերազմի թատրոնը ներկայանում էր երկրագունդն իւր համայն կենդանի արարածներով հանդերձ։ Երկրագունդը ստեղծուել է Ահուրայի ձեռքով չարին վերջնականապէս յաղթելու նպատակով։ Սակայն նա և իւր վրայ գտնուող իրերը յօրինուած են շատ կոպիտ նիւթերից, քան հոգիների մարմինները, ուստի յամերժակեաց չէ, նրան վիճակուած է դոյութիւն ունենալ միայն 12,000-արի։

Անուրա-Մազգայի և Անգրօ-Մայն՛ուսի բանայաշտին խորին թշնամութիւնն երևում է դեռևս տեսանելի աշխարհի ստեղծագործովթիւնից չափական տարիները առաջ, սոցա պատերազմը մկանում է հենց այն ժամանակից, երբ չար ոգին նշանակում է լոյսը և մտքումը՝ դնում է ոչնչացնել նրան։ Սրանից յետոյ թշնամիները զինադարձարութեամբ դաշնեն կապում 9000 տարուայ միջոցով։ Անուրա-Մազգան օգտուելով ամսոյեանի այս լինախուստ յալթեթիւնից, ստեղծեց աշխարհը, որի օժանդակութեամբ վճռեց խորսակել Անգրօ-Մայն՛ուսին։ Անգրօ-Մայն՛ուսը սկզբում չհասկացաւ այս ստեղծագործութեան բոլոր նախակութիւնը, բայց դուզնագետայ ժամանակ անցներուց յետոյ հասկանալով, այն աստիճան վհատուեց, տապալուեց, որ երկար ժամանակի ընթացքում չկարողացաւ իւր ուժերը հաւաքել պատերազմը նորոգելու համար։ Աշխարհս բովանդակու տեսանելի և անտեսանելի երևոյթներով հանդերձ ստեղծուեց Անուրա-Մազգայի գօրութեամբ մի տարուայ ընթացքում, առմենից առաջ ստեղծուեցին իրեն սպասաւոր հոգիները, յետոյ երկինք ու երկիրը, ջուրը, բուսականութիւնը ու կենդանիները և բոլորից յետոյ մարդը։ Ստեղծելով աշխարհը, Անուրա-Մազգան զետեղեց նրան 3000 տարուայ միջոցում երկնային տարածութեան մէջ, ամեն տեսակ պատահարներից տարակայ։ Յետոյ երկրագունդն ընկաւ իւր իսկական վայրը, բայց նրա վրայ էլի 3000 տարի թագաւորեց կատարեալ խաղաղութիւնը և երջանկութիւնը։ Այս ժամանակներում չար ոգին կարողացաւ այնքան իւրքայքայած ուժերը կազմուել, որ յանդզնեցաւ

ստեղծագործութիւնը վնախտելու ձեռնամուխ լինել։
Համկանալի է, որ նա դիտաւորուել է ըստիս դերեւ
հանելս Ահութայի բարի դործը՝ այսինքն նրա իշխաւ
նութիւնը դարձնել կլիպիչ, անապատային, անպատղա-
քեր փշակից և վայրենի խոսութիւնատած ամայի վայ-
րեզ, որի մէջ վկէտք է թափառէին ամենի և ևս վայ-
րագուգազաններ, ամասակար միջատնել և թունա-
ւոր բոյմեր։ Ահաւասիկ Անգրօ-Մայն՛ուսի պտեղա-
գործութիւնը։ Յ վնախտակա խոյժաւոր մարրա Ս
Մինչև մարդու հաւասար արտրած ստեղծութիւ-
լը, չար Խզին ինկապէս չկարողացու բարձրանալ։
ճշմարիտուէ մինչև Զրադաշտի երևան գալը, մմտա-
նաներն աստանորում էին այսեղուայնտեղ մարդու
կերպարանքով դիմակաւորած և յուզում մարդկանց,
սակայն Զրադաշտը յաղթեց նոցա և այս արժանա-
յիշատակ ժամանակից սկսած նոքա կարող են մի-
այն մարդկանց գայթակղեցնել։ Զրադաշտի վարդա-
պեառութեան հետակող մարդն ազատ կամքի տէր անձն
է և ընդունակ է բարին և չարն որոշել միմեանցից։
Զրադաշտի վարդապեառութեան հայեցակէտից ազնիւ
և հցմարիտ մարդը նա է համարւում, ով սրտի մոօք
դաւանելով ճշմարիտ լրոնը, ամենայն զօրութեամբ
չանք ու ճիգ է թափում դործակից լինել բարուն չարի
դէմ, աշխատում է բնաջինջ անել վնասակար կեն-
դանիներին, պաշտպանելով խնամքը է տանում ար-
դիւնաւոր արարածներին, մշակում է երկիրը, նուի-
րականապէս կատարում է քաղաքական թէ լրօնա-
կան սահմանագրութիւնները, մեծարում է սրբազն
կրակը, ջուրը և երկիրը, երբէք կեղծ ու պատիր
բաներ չէ խօսում և վերջապէս ով հաստատակամու-
թիւն ունի սանձահարել իւր անբարոյական կրքերը։

Զրադաշտի լրօնի տեսակէտով, նայն անձնա-
մուրութիւնը, որ կամքի թուլութեան պատճառաւ
ապիկար է Ընթանալու արդարութեան յարթ շաղով
և միշտ երերում է բարդուն չարի անշըպետում, միշ-
տ այն կիստամարդ, կոչմանն է արժանի Ավերջապէս
մարդկանցից նոքա, որոնց հոգիներն Անգրօ-Մայ-
նուսի իշխանութեան տակ են գտնուում մամբողջամ-
պէս, «կիստագեեր» կարող են անուանուել։ Վկերջին
մարդկանց դասակարգին պատկանում են, ուխտա-
նենդները, հերեափիկուները, ամբարիշտները, երդ-
մագանցները, յելուղակները և պատրիչները։ աճտ
չար ոգու այսպէս ասած գործի բանտկը, որ սա-
տարում է քանդել և փչացնել ամեն բան աշ-
խարհում, ինչ որ գեղեցիկ և լաւ է։ ևս ու
Սակայն մարդու, ինչ տեսակ է լոր նա լինի
շատ սակաւ ժամանակով է մասնակցում այս հոյա-
կազմ պատերազմին, որով գերութիւն է ողջ աշ-
խարհս, նա օժտուած գոլով անմահ հոգով, նիւթե-
ղէն մարմնի եղծանելուց զինի մտնում է հանդեր-
ձեալ յաւիտենական արքայութիւնը, ուր սպասելով
վերջնական դատաստանին, վարձատրութիւն է
ստանում իւր կատարած բարի և չար գործի համար։
Մարմնը մեռնելուց յետոյ հոգին երեք որ շա-
րունակ պտտում է նրա բոլորտիքը, երեք օրից
զինի՝ չորրորդ օրը ժամանելուն պէս ճանա-
պարհ է ընկնում և հասնում դատաստանավայրը,
որ գտնուում է Սինտաւ, յորջորջուած սքանչելահրաշ
կամքի մօտ։ Այստեղ բարի ոգիներն իսկոյն քըն-
նում են մարդուս հոգին, մեղադրուում են չար ոգի-
ները։ հոգու գործերը կշռում են կատարեալ անա-
շառութեամբ մի մեծ կշռքով։ Կշռքի մետի ծան-

րանալուց կամ թեթևանալուց հոգու ապագայ վիճակն որպաշտում է: Կշռելուց յետոյ հոգին պէտք է անցնէ «Սանտաւ» սոսկալի կամիջով. եթէ հանգուցեալի հոգին արդար և սուրբ է, այն ժամանակ բառը որիների պաշտպանութեամբ անդորր կերպով կանցնէ, իսկ եթէ նա մեղաւոր է, չար ոգիները անադունաբար կգլորեն ստորև դժողքը, ուր պատշաճ վարձատրութիւն է ստանում կատարած յանցանքների փոխարէն: Հոգիները, որոնց կշռում են թէ բարի և թէ չար ոգիները ապահում են, մի անորոշ կիս աղջամղջային տարածութեան մէջ, ուր ոչ ցըրտից, ոչ ուրախութեան, ոչ վշտի և ոչ էլ տանջանքի երես են տեսնում:

Այս ժամանակներում, երբ մարդկանց ոգիները սպասում էին վերջնական դատաստանի, աշխարհումն չարի և բարու մէջ շարունակում էր անդուլ և անդադար պատերազմը: Ազգում չարը սարսափելի ուժով էր, սակայն բարին յարատև անընդհատ պատերազմի միջոցով կարողացաւ նուազեցնել նրա գօրութիւնը, սրանից յետոյ արդէն կարիք զգացուեցաւ աշխարհ ուղարկել ճշմարտութեան վեհ տիպարին՝ Զրադաշտ վարդապետին: Բայց պատերազմը սրա մահուանից յետոյ ևս չդադարեց, թէ պէտք և երկար պատերազմելով չար ոգին չը կարողացաւ իւր առաջուայ վայելած իշխանութեանը հասնել, որ արտօնում էր մինչև Զրադաշտի դալը: Զրադաշտի մահուանից գկնի աշխարհա վերըստին պէտք է եղծանուել չարիքներով և անբարոյական զգացմունքներով տոգորուած մարդկանց ստուարութեամբ, որի գէմ մաքառելու համար Ահուրմա Մազդան պէտք է առաքէր աշխարհ մի ուրիշ մար-

գարէի իւր մեծ ողորմածութեամբ: Սրա առաջին յայտնութեան մասին երկրին ազդարարուելու էր ըընութեան արտաքին երևոյթների տարօրինակ սքանչելիքներով: Արեգակն երկնքի հորիզոնի վրայ պէտք է տասն օր և տասն գիշեր ճաճանչագեղաբար փողփողալով կանգ առնէր: Նա գալով, մարդկանթեանը նորից մերս էր գէպի բարի և պատուական դորձերի ճաճապարհը իւր ճիւաղականը ընթացքից, ճնշելու էր չար ոգսւն և բնաջինջ պէտք է անէր բոլոր գարեկվի: վայրենի գազանների և պաճարներին: Սրա կենազրաւելուց յետոյ մարդկային ազգը դարձեալ պէտք է ընկղմուէր նոր տարապանքների և չափազանց սուդ ընտանեկան սպարագանների մէջ 1000 տարուայ չափ, մինչև մի այլ մարգարէի աշխարհ գալը, որի ծննդեան ժամանակ արեգակն երկնակամարի վրայ ամբողջ 20 օր և 20 գիշեր պէտք է կանդնէր անշարժ: Այս նոր մարդարէի գործունութեան միջոցին աշխարհի երեսնեց պէտք է զրաւուէին Անդրօ-Մայն՛ուսի ձեռքով հաստատած վթարաբեր էակները, ժամանելու էր խաղաղութեան և երջանկութեան թագաւորութիւնը. մարդկիկ կարիք չպէտք է զգային ուստիստաների ճարելուն, ծառակը բնաւ չպէտք է չորանային կամ թորշամէին իրանց կանաչագեղ սաղարթներից և մարդկային բոլոր համայնքներից վերանալու: Էին չարութիւնը, թշնամութիւնը և նախանձը: Վերջապէս 1000 տարի անցնելուց զկնի ևս աշխարհում երևալու է Սովորու անունով մէկ նշանաւոր մարդարէ, որ կնշանակէ վիրիշ, սա բոլորից ամենամեծը կլինի. արեգակը նրա երևան գալը մարդկանց կյայտնէ: իւր 30-օրեայ երկնքում կանգներով, սրա մեծաջան գոր-

ծունէութեան լընթացքում չարն արդէն վերջնակառ
նապէն կինուանայս մարդկանց միջիցն և այս ժաման
նակազմայն պարզապէս կշանակէ համարտութեան
բարի վեհամատը: զգություն միաբանութմ: խոյմանցին
վերջապէս դաստաստանի օօրը կը յօժմանէ,
հանդուցեալները յարութիւն կառնեն փրանց մեռած
տեղում: սրարիները չարերի հետ միահամուռ: ի մի
վայր կը համախմբուեն, ուուր ամրն ոքիւր արած
լաւ կամ վատ գործերին անձամբ ականատես կիմի:
Սրանից յետոյ բարիներին չարերից կանջատենք բար
ըիներին կը ամսնեն գրախտը, ուր երեք օր և երեք
գիշեր կը ճաշակեն երկնային ուրախութիւնները,
իսկ մեղաւորներին կը շեն դժոխքը, ուր և կտանջեն
երեք օր և երեք գիշեր չարունակ սոսկալի տանջանք
ներով կ չարչարանքներով, որոնց հետ բաղդատած ի
ըանց առաջուայ կրած չարչարանքները դուզնաքեայ
են: նորա, որ կենդանի ժամանակ ապիկար են եւ
դել իրանց արած մեղքերը սրբելու, քաւելու առաւ
քինի և Աստուածահանոյ գործերով, այժմ պէտք է
դրօշմուին ինքըով, որով և նոցա ամօթիսածութիւ
նը և կտրանքը առաւել կը սաստկանսոյ, սակայն
այս վերջին խիստ տանջանքների ժամանակ կը փա
րատու նոցա վրայից բովանդակ չարիները, կը
մաքրուին բոլոր մեղքերն ու յանցանքները և հա
մայն հոգիներն Անգրօ-Մայնուսի իշխանութեան
տակից կազատուեն: Ահա այս ժամանակ աշխարհն
աւելի կը լայնածաւալուի, լեռները կամ հովիտնե
րը, որ նրա դիրքը պղաւաղում էին՝ կկործանուին
կամ կանյայտանան: Մարդկի պղատ, արձակ բնա
կութիւն կը հաստատեն նրա հարթատարած մակերե
սոյթի վրայ, որ կը բարձրանայ դէպի երկինքն և

կը մերձենայ դրախտին, այս բոլոր փոփոխութիւն
ները ակղի ունենալուց յետոյ, Ահուրա-Մազդան իւր
արարչադաւրդաւթիւնը վերջնական կերպով աւար
տուած կը յայտարարէ և այս միջոցին առաջինու-
թեան և ճշմարտութեան թագաւորութիւնը կը ժա
մանէ: Սողիոսը մեծ զոհաբերութիւն կանէ սրբա-
զան ցուկերից և աստուածային «Գաօմա» խոտից,
որ անմահութիւն է ձօնում բնական արարածներին:
Ահուրա-Մազդան կը վարձատրէ մարդկանց հրաշալի
և անմաշելի հագուստներով. աշխարհումս այլ ևս
սովեր և պասուքներ չեն լինիլ և բոլոր մարդիկ կը
կենցաղավարեն փոխադարձ սիրոյ և ճշմարիս կրօ-
նի յարգանքների զգացմունքներ տարածելով մի-
մեանց:

Զենդավեստիայում, այս փառաւոր և իսկա-
կան երջանկութեան հետ շաղկապուած է քրարու
վերջնական յաղթութեան դրօշակի պարզուելը չա-
րի դէմ: Ահուրա-Մազդան վերջնական և վճռական
պատերազմի մէջ կմտնէ Անգրօ-Մայնուսի դէմ.
սոցա երկուախն ևս աջակցութեան կդան իւրեան
ընկերները և սպասաւորները, չար և բարի ոգինե-
րը. երկար ժամանակ երկու ախոյեան բանակներն
էլ անդրդուելի յամառութեամբ կուռելուց զինի,
վերջապէս չարը պէտք է փառաւորապէս յաղ-
թուի. նա պէտք է գլորուի դժոխքի անդունդը և
այնտեղ սատակէ, իսկ «բարին» յաղթանակն առած
պէտք է անծայր բերկրանքի մէջ ընկնէ:

Ահաւասիկ Զենդավեստիայի կրօնական յօրի-
նուածի (système) հակիրճ և հարեանցի նկարագրու-
թիւնը, որի հիմնադիրը, հաւաստի է արդեօք թէ:

ոչ, դժուարին է խմանալ, համարւումք է Ձրաղաշտ
մոդք: Այս յօրինուածը լրսել աշխարհին պարուն
չարի» մէջ եղած խնդիրը յտևակնոտ փորձերից մէկն
է հանդիսանում: Եղի՞ն այս և կայսարակ ցը ճառու
ասեց ով զմբյալուարակի մասնակինքն և մասն
արդի խմաթ մասնացքանոր ծմբ պատրի վշան
ըշտառի ամսութ՝ միլիոնառաս և բժիշկոց մար
միլիոնեականա մաքուզ նաևծ և մասնակինքն ու
կայսար քայլքան Հյուանզարի ցը մաքրա՛ս-այսու՛
և յս սեւականալու խոցեւաւրած պաշտամ և
ցը թիրան կայու և լուծի մէջ գրամատար և դիմու
ոցի ուժանեցն և լողի հայրաբարի մայստարացմէջ
մինչ ովհանակա զմբյալուարը պամբարացմէջ

1) «ՄԵՂԴԱՂԻՄ» ուրիշ կերպով կարելի է տաել, իսկապէս մազդայականութիւնն կամ մազդազապաշտութիւն։ Այս երեք բառերի, «մազդա», արմատը գտնուում է Ահուրա-Մազդա բառի երկրորդ մասի մէջ՝ «Մազդայի», որ նշանակում է ամենիմաստ, վեհ զենդական լեզուով՝ ուրեմն միզդափրմ կը նշան Շիմաստալից, կամ վեհ գաղափարներով լի մատեան, Հայկական մատենակիրներն իւրեանց երկասիրութիւններում մազդայականութեան (Սասանեան չրջանում տարածուած կրօնին անուտնում են «օրէնք մոգուց», «գենի-մազդեզն», «մազդեզի վարդապետութիւն» ձևերը; «Գենի-մազդեզն» բառի նախնական — զենդական գաղափարն է „даéնա mazdayēnis“: «Գենի-մազդեզն» բաղկացած է երեք պարզ բառերից՝ գէնից+մազդա-ից, +եզն-ից, որի զենդական ձևն, ինչպէս ասացինք, կը լինի գաենա+մազդա+եասնիս: Դաենա, որի պարսկերէն ձևն է din (դին) նշ. կրօն կամ վարդապետութիւն։ Հոչակաւոր և բազմահմատ արևելագէտ Բիւրնուֆի կարծիքով (Commentaire sur le Vasna եր. 12-13) „mazdayēnis“ (մազդաեանիս) բառը բաղկացած է երկու պարզ բառերից՝ „մազդա-ից“, որ Արամազդ ծայրագոյն աստծու հաստատուն մազդիրը պէտք լինի, սակայն մի քանի գիտնականներ ենթադրում են, որ „մազդան“ Արամազդի իսկական անունն է, ոմանք ևս այս անունը համարում են մազդիր, որ նշանակում է մեծ, վեհ և իմաստուն. իսկ բառի

երկրորդ մասը «ետանիս կամ ետանի», նշանակում է „զոհ“: Ուստի „mazdayēnis“ նշ. մեծ զոհ, այսիքն այն անձը՝ կամ մողովութիւնը՝ որ մեծարում է Ուրմզդին, ի պատիւ սրա զոհաբերութիւններ է անում: Ետանի կամ Հայկական մազդինի՝ „եզն“ այլապէտ կարելիաէ թարգմանել պաշտող բառով, որից իսկոյն կարելի է եղանակացնել, որ դաենա մազդաեանսնիս՝ կը նշանակէ կրօն կամ վարդապետութիւն մազդային պաշտող, այսինքն՝ մազդապաշտական լուրդապետութիւն կամ մազդապաշտական լուրդապետութիւնը և այն կրօնը, որի մէջ ամփոփուածէ դէնի բոլոր սկզբանքները և ծէսերը: (2) Դարեհն Աշտառապեանը բարձրացաւ պարսից գուհը կեղծ-Նմիրդիսին կենազրաւելուոց զինի՝ 521 թ., որն իւր մարտիցի կուսակիցների, ովնութեամբ խարդախարար ժառանգեց Կամրիսի ընդարձակատարած թագաւորութիւնը: Դարեհնը պարսից ինքնակալների մէջ ցարդ առաջինն է հանդիսանում, որ պետութեան մէջ որոշ կարգադրութիւնները էր սահմանում: Անպարսից բովանդակ պետութիւնը բաժանեց քսան կուսակալութիւնների, տնօրինեց արքունիք հասնելի տուրքի քանակութիւնը: ամեն մի կուսակալութեան մէջ հաստատեց քաղաքական և զինուորական իշխանութիւն, նշանաւոր քաղաքները միմեանց հետ յարաբերութեան մէջ դրեց նորաշէն ձանապարհներով, որոնցով և զանառականութիւնը աւելի ծաղկեց և ուրիշ այսպիսի նորանոր կարգադրութիւնները մտցրեց: Դարեհի լայնածաւալ պետութիւնը տարածւում էր միջներկրական ծովից մինչև Հինդոս գետը և Կասպից ծովից մինչև Պարսից ծոցը, բացի այս սահմանների մէջ մտնող երկրներից,

նա նույաձեց ևս Յունաստանի հարաւային մասը և Մըրակիան, այս երկների մէջ ապրում էին յորսվաթիւնաբներնը ազդրութիւններ: Այս տիեզերանուկալը մեռաւ 405 թ. մ.թ. ձ. իւր վերջինին պատերազմում կրած փառաւոր յաղթութիւնից յետոյ: Աթենացի Սիրդիակէզ գօրապետից պարան յաջորդեց իւր որդի կաեր-կաեսը; յոյնունող նորայսխու յոյն ծառու (վ. 3), «Զենդավեստիան» պարսիկների այն մըրդագան մատեանն է, որին մէջ բռվանդակուած է Արամազդից հրահանգուած վարդապետութիւնը (գրքիս երես 30): Հեթանոսական առվարութիւնները, կրօնական ծխակատարութիւնները և այլն: Հստ ասութեան Օրադաշտի, այս գիրքն ինքը անձամբ ստացել է Ուրմզդից, պատուէր առներով վեր, ջինից, որ գնայ Աշտառապիւ արքունիք և այսուղ քարոզէ «Զենդավեստիայի» պահանջած գաղափարները (Տես երես 31): «Զենդավեստիա» բառը հին պարսկական բարդ բառ է և կազմուած է երկու բառերից — զիոն-ից որ նշանակում է հոգի և անվանուած կամ նատակութիւն կրակ. ուստի «Զենդավեստիա» պահանջած գաղափարներով լի մատեան, որի ընթերցանութիւնը զրագաշտական մարդուն կրակի պէս ջերմ զգացմունքներ է ներշնչում: Ումանք կարծում են, որ «Զենդավեստիա» բառը բաղկացած է զիոն-ից և անվանուած կազմուած է մեկնաբանութիւն, իսկ «անվանուած» բնագիր: Ուրեմն «Զենդավեստիա» այլ բացարձութեամբ կնշանակէ քննագրի մեկնաբանութիւն:

4) Դիլք թագաւորացն պարսիկների ազգային

այն վիպասանական մեծածաւալ մատաեանն է, ուր առասպեկտական բնաւորութեամբ իրանական ժողովրդի հինդուկուչի սահմաններից գաղթելով պատմութիւնը, ոոցա հնագոյն աստուածպաշտական համառօտ ամփոփումն, իրանական պետութիւնների մէջ տեղի ունեցած յարատել պատերազմների գիւղուածները, սխրագործ հերոսների, ինչպէս Խուշէնդի, Կախմերսի, Գիւղուղի, Տախմուրասի, Ռուսաէմի և ուրիշների քաջութիւնները և քաղմաթիւ իրերի և երեսոյթների մասին եղած հեքեաթներ և զրոյցներ։ Սրա պատմութիւնը ակաւում է հնագոյն և առասպետական ջջանների գէպքերից և անցնում է մինչև 1011 թ. այսինքն իննը տարի առաջ նախ քան հեղինակի մահը։ Այս նշանաւոր մատեանի անուան պարակական ձևն է «Տահ-նամէ»։ շահ պարսկերէն նշանակում է թագաւոր, իսկ «նամէ» նամակ կամ գիրք, ուստի «Տահ-նամէ» բառացի թարգմանութեամբ նըշանակում է „թագաւորի գիրք“։ Գրքիս հեղինակն իւր երկասիրութիւնը յօրիննելիս օգտուել է յարդեղած արաբական և պարսկական մատենագիրների գրաւոր վաստակներից, ժողովրդի շրջանում տարածուած սեթեւեթ տւանդութիւններից, ժամանակակից գուշտան «գուշտան» կոչուած բանաստեղծների և երգիչների հանճարի արտադրութիւններից, պարսկական ազգի վառ երեսակայութեան (fantasie) ստեղծած գերբնական բովանդակութիւնն ունեցող հեծած գերբնական բովանդակութիւնն ունեցող հաքեաթներից, զրոյցներից ու առասպեկտներից և մասսամբ «Զենդավեստիայից» է ծաղկաքաղել։ Այժմ մի քանի խօսք հեղինակի անձնաւորութեան մասին, Գրքիս յօրինողի անունն է «Իրին»—իսկական մերը—Երիփա—Արիւլ—Քետասիմ, սակայն սա

յայտնի է թէ հների և թէ նորերի գրուածներում սակաւ բացաւութեամբ „Ֆիրդուսի կամ Ֆիրդուսի“ մականուամբ, որ կնշանակէ արքայութեան, Պատմութիւնը սրա կեանքի պարագաների նկատմամբ շատ սուղ տեղեկութիւններ է հաղորդում մեզ։ Ֆիրդուսին ծնուել է 940 թ. Գ. ծ. յ. Խորասան նահանգի Շաքար կոչուած գիւղում և մինչեւ 35 տարեկան հասակը Խրանում գեգերելով ուսումնասիրում էր երեխ ժողովրդի կեանքը։ Այս ժամանակից սկսած նաձեռնամուխ եղաւ շաքարիկուլու «Շահ-նամէն», որ պարսկեների փուռքն ու պարձանքն է կազմում։ Այս շաքարութիւններից մի քանի ընտիր կտորներ կարդացին նոյն ժամանակուայ գիտութեան պաշտպան, Հաղնայում նստող Մախմուտ Խալիֆայի առաջ, որի իշխանութեան միջոցում Պարսկաստանում գրականութիւնը և գեղարուեսար զգալի բարգաւաճման հասան։ Մախմուտն այն աստիճանի հաւանեց և գնահատեց այս շաքարութեան թանգագին արժէքը, որ պատուիրեց իւր վեպիրին վերջինիս վարձատրելու այնքան նուագ հազար ոսկեներով, որքան 40000 յանգաւոր երկոտանի կայ շաքարութեան մէջ։ Ֆիրդուսին իւր երկասիրութիւնը վերջնականապէս աւարտելուց յետոյ՝ 1011 թ. ներկայացրեց ուսումնատենչ Մախմուտ խալիֆային՝ իւր մեկենասին, որից և ստացաւ իրեւ վարձատրութիւն 60000 ոսկի։ Սրանից յետոյ նա երկար ճանապարհորդեց Իրանի գանազան կողմեր և վերադաւ իւր ծննդավայրը, ուր և մեռաւ 1020 թ.։ Վեսմիրայ լիտերատուրա, տօմ. I. Շերրա.
5) Այս հոչակաւոր օրէնսդրի զենդական ձևն է, որին մենք հանդիպում ենք «Զենդավեստիա»

զրքում „Զերդ-Աշտրա“ երբեմն ևս „Զրադ-Աշտրա“ և զարդ-աշտրա։ Արարական և պարսկական հեղինակներն առաւել շատ գործ են ածում «Զերդ-ուշտրա»։ Գալով հայկական մատենագիրներին, այէտք է նկատել, որ սոցա երկերում պարսկական ականաւոր մոգն անուանւում է «Զրադաշտ», որ ամենից շատ է տարածուած, «Զերդ-աշտ», «Զրուաստր» «Զրադէչ», և մերթ «Զարդօշտ» ձեւերը Խակ բիւզանդական և լատինական քերթողներին նոյնպէս և համայն Եւրոպական ազգերին յայտնի է „Zoroastre“ Զորօ-աստր յորդշմամբ։

Եւրոպական զանազան բանիրուն գիտնականներ՝ Լայերդ, Շիփր, Ռասք, Լառսէն, Վինդիշման, Անքէտիլ վերոյիշեալ Զրօ-աստր անուան ձեւը քննութեան ենթարկելով ստուգաբանել են տարբեր-տարբեր նշանակութեամբ։ Սոցանից ոմանք ստուգաբանել են „մոգ“, ոմանք „սաստղների քննիչ“, ոմանք „գաղտնի կրակ հնարող“, „սաստղների քահանայ“, „գաղտնիքների պատկեր“, «սաստղների որդի» և այլ կերպով։ Աւելորդ չեմ համարում թարգմանութեամբ առաջ բերել հոչակաւոր առևելագէտ Բիւրնուֆի այս անուան նկատմամբ շարադրած տեսութիւնից մի փոքր կտոր հետաքրքիր անձանց փափառը յագեցնելու համար։ յարգելի գիտնականը հերքելով Անքէտիլի տուած բացատրութիւնը որ է —taschter —astre d'or, c'est—à—dire, brilliant et liberal—այսինքն ոսկեզօծ taschter—astre, այսինքն փայլուն և ազատամիտ, ասում է այս առանձին բառը (Զարա-տուշտրա), որ ես ընդունում եմ սոյզ օրինակը ustra (ուստրա) բառն է, որ զենդերէնում, ինչպէս ևս սշտրա (ուշտրա) բառը սանոկիտերէնում նշա-

նակում է ուղարկած Արդէն յայտնի է, որ յատուկ անուններն յաճախ կազմուել են հին Պարսկաստանում և Բակտրիայում այլ և այլ ընտանեկան անուններ, ուրիշ երկներում ձիու (աչրա et aurvat) շան (քրա) և այն, ուստի մի փոքր զարմանալի կինի այն պարագան, որ ուղտի անունը գտնուում է ինչպէս մի քանիսներն այլ իրերի անուններից «զօրօ-աստր» անուան կազմութեան մէջ։ Այս ենթադրութեամբ, ustra (ուստրա) մասը յապաւելուց յետոյ Zarathustra (Զարատուշտրա) տակին կըմնայ „zarah“ (զարաթ), որպէս բառի կազմութեան առաջին մասը։ Սակայն ես չեմ կարծում, որ ուրիշ տեղ երեցած լինի այս բառն, որի մէջ տակաւին կարելի է ճանաչել զար (զար) որ—ի-ի յանդով արմատ լինելով զար (զերի) գաղափարին, որ նշանակում է գեղին կամ ոսկեզօծ և որը գտնուում է պարագի լեզուում „zer“ (զեր) նախնական ձեռվ... „zarat“ (զարաթ) պէտք է նշանակէ դեղին, պարսկերէնում „zerd“ (զերդ). և զօրօ-աստր անունը որի հայրը կոչում էր celui qui possède beaucoup de chevaux. Նա որ տիրում է շատ ձիաների, կարելի է թարգմանուել „fulvos canelos habens—ρωσοւղարկութեան ունեցող։ Սակայն և այնպէս այս այստեղ մի հասարակ կարծիք է, և ես ընթերցողին եմ թողնում դատաստան անելու, եթէ ապացոյցները, որ ես հիմա առաջ կը բերեմ ցոյց տալու համար, բաւական են դորա հնութեան վկայութիւնը հաստատելու, որ տեսածը «astre» (աստր) բառը մոգութեան վերանորոգողի անուան մէջ (Commentaire sur le Vokna) երես 12—14։

Սրանից երկում է որ գիտնականը աշխատում

է մերձաւոր իսկութեամբ ապացուցանել թէ „Զարա-տուշտրա“ անուան „զարաթ“ մասն, որ մերթ պատահում է «զերթ և զարթ», ձեռովի, ծագում է «զեր կամ զերի» բառից, որ նշանակում է ոսկի կամ ոսկեայ: Գալով „Զարա-տուշտրա“ անուան երկրորդ մասի բացատրութեանը՝ կը տեսնենք, որ Բիւրնութը մասամբ համակերպ է ստուգաբանում մի քանի այլ գիտնականների տուած բացատրութիւների հետ, ընդունելով այս «ուշտրա» մասը «աստրա» ձևով, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարսկական ախտրա (ch=ի) բառը, որ նշանակում է աստղ, որ միենոյն արմատն ունի պահաւերէնի «star» (ստար) եզենդերէնի «ctare» (ստար), սանսկրիտերէնի «ctar» (ստար) բառերի հետ, որտեղից առաջ է եկել լատիներէնի «stella» (սպելլա), յունարէնի «άστρος» և հայերէնի «ախթար կամ ախտար», ձեռը, որի արտայայտութիւնն է «աստղ»¹⁾ բառը:

1) Մի ինչ որ ինքնակոչ հայկաբան հերքում է հայկական „ախտար և աստղ“ բառերի մի ընդհանուր արմատ ունենալը յիշեալ լեզուների հետ, առարկելով թէ՝ «Աստղ բառը բարդ բառ է և բաղկացած է երկու բառերից՝ աս-ից, որ է այս և տըղից, որ է տեղ, այսինքն այստեղ, որովհետեւ արեգակն ուրիշ տեղ է՝ այնտեղ: Թշուարի տուած բացատրութիւնն ինչ աստիճանի կամայական և ունայնիմաստ փիլառփայութիւնն է, մարդ ստիպուած է միայն ծիծաղել, մանաւանդ մի այլ բառի վերայ՝ „ապականի“: պատուելին ասում է թէ „ապական“ բառը կազմուած է „ապ“, որ է բացասական մասնիկ և «ակ-ից, որ է ակն, այսինքն աչք, ուրեմն „ապական“ առանց յօդի կը նշանակէ „անաչք“ որովհետեւ աչքը մաքուր մարմին է, իսկ անաչքը անմաքուր:

6) Զրադաշտի մասին տեղեկութիւններ հաղորդող արևմտեան պատմագիրներից գլխաւորները հետեւալներն են. Դիոդորոս Սիկիլիացի, Պլինիոս Վերոնացին, որ ապրում էր 2-րդ դարում Քրիստոսի ծնունդից յետոյ: Վաղերիոս Մաքսիմոս, որ ապրում էր առաջին դարում. Պղատոն որ ապրում էր 5-րդ դարում ք. ծ. յետոյ: Յուստինոս Կըղեմէս Աղեքսանդրացի և այլ պատմագիրներ: Ցիշեալ մատենագիրները Զրադաշտի ապրելու ժամանակի և ազգով ինչ լինելու նկատմամբ տարբեր տարբեր տեղեկութիւնն են աւանդում: Սոցանից ոմանք զըրուցանում են, որ Զրադաշտ պարսիկ էր Ումարացի և ապրում էր Շմերդիսի և Կամբիսի ժամանակ: Պղատոնն այս շրջանին վերաբերեալ Զրադաշտին համարում է Ումգդի որդի. ոմանք քաղդէացի, որին հրէական մատենագիրները վերագրում են Նոյի ժամանակին՝ և համարում վերջինիս որդի. ոմանք բակարիացի ու սոցա թագաւոր, որ ապրում է Նինոսի ժամանակ. ոմանք՝ ասորեստանցի, որ Շամիրամի ժամանակ էր ապրում, իսկ Կղեմէս աղեքսանդրացին և Կիւրգէնը սրան ծագումով հայ են համարում Պամփիլացի անուանելով „երօս արմենեօս“: Իսկ արևելեան պատմագիրներից Զրադաշտի մասին պատմում են շատ քիչ, Ռաշիդէգիփին, Նասիրէդիփին—Թուսի—Ասադի Ֆիրդուսի, որոնք ապրում էին ԺԲ. ԺՄ դարում և մահմեդական էին, իսկապէս սոքարոլորն էլ առասպելախսառն իրանական ժողովրդի մըջից ժաղկաքաղելով, աւանդութիւններ են հաղորդում Զրադաշտի անձնաւորութեան մասին: Հայկական հին մատենագիրների մէջ միայն անմահ Մովսէս-Խորենացին է մի քանի կարճառօտ խօսքեր ա-

սուրմ դրա մասին. Խորենացին Զրադաշտին ներկայացնում է մի քանի յունական և հոռմէական մատենագիրների պէս Նինոսի և Շամիրամի ժամանակակից և Բակարիացիների կամ Մարերի թագաւոր (առև Մովս. Խորենացու Հայոց պատ. Ա. գիրքը Զ. գլ. և ԺԵ գլ.):

7) Կամբիսը Պարսից Աքիմենեան տոհմի ամենափառաւոր գահակալներից մէկն է հանդիսանում մի քանի պատերազմների յաջողութեամբ։ Սա իւր հօր Կիւրոսի, որ մեր Տիգրան Նրուանդեանի դաշնակիցն էր, թագաւորութիւնը ժառանգեց 522 թ. Ք. ծ. առաջ. և մեռաւ Եփիպոսից իւր Շօջ մայրաքաղաքը վերադասնալու ժամանակի ձիուց վայր ընկնելով։

8) Այս թագաւորը պատմութեան մէջ յայտնի է կեղծ մականուամբ իւր անձնաւորութիւնը կամ-բխի հաւազատ եղբայր ձևացնելու պատճառով։ Սա ծագումով մարացի էր և կոչումով մոդ. բարձ-րացաւ Պարսից գահը 521 թուին Ք. ծ. առաջ և սպանուեց Պարսից իշխաններից իւր խարէութիւնը երևան գալով, յաջորդ տարին։ Եմերդիսին պայազե-տեց Գարեն Վշտասպեանը, Տես ծանօթ. 2.

9) Բակտրիան գտնուումէ Պարսկաստանի հարաւ արևելքան անկիւնում Հնդկաստանի սարերին սահմանակից, մի ժամանակ այս քաղաքը Պարսկից թագաւորների աթոռանիստն էր:

10) Մարտաստանը կամ Մարգը դժուում է Պարսկաստանի, Հայաստանի, Ասորեստանի և Խորժաստանի միջնավայրում, սորա զլսաւոր քաղաքն է Եկեղացան:

11) Բուդղան բուդղայական կամ Պօ կրօնի

Հիմնադիրն է համարւում. որ ներկայումս տարածուած է հին ժամանակներից սկսած Զինաստանում, Հնդկաստանում, Սէլլոնում, ձափոնեան կղզիներում և արեելեան Ասիայի մի քանի ցեղերի մէջ, որոնցը լուսաւ հասնում է մերձաւորապէս 505 միլիոնի: Բուգդա մեծ վարդապետը ծնուել է մօտաւորապէս վեցերորդ դարու կիսում Քրիստոսի ծննդից առաջ Հիմալայեան լեռների ստորոտում գտնուող Նեպալ աշխարհաւմ մի փոքրիկ թագաւորութեան մէջ, որի աթոռանիստն էր Կապիլավասար քաղաքը: Ըստ աւանդութեան Բուգդան ծնուել է կուսից: Այս հոյակապ անձնաւորութեան իսկական անունը Բուգդա չէր, այլ «Սուդաբա», իսկ Բուգդան մակդիր է նորա անուան, որ նշանակում է «գիտուն, խմացող, յուզող»: Ժամանակակից ժողովուրդը Բուգդային անուանում էր «Ճգնաւոր Հոտամ». բանաստեղծութեան մէջ յաճախ հիշում է «Մակիա Մունիս, անունով: Բիօգրաֆիա сто великихъ людей. книга 1, Будда երեսъ 45.

12) Գրադաշտական վարդապետութիւնը զա-
նագան հարստութիւնների (dinastie) լրջանում,
ոկսած Աքամենեանից, հետզհետէ սկսեց մեծ ծա-
ւալ ստանալ Արեւելքում: Սասաննեան հարստութեան
հիմնադիր Արտաշել Ստահրացին 226 թուականին
հիմն ի վեր տապալերով Պարթևական քայլայուած
հարստութիւնը՝ իշխանական տոհմը, իւր աթոռը
հաստատելով Ստահրում, մեծ յաջողութեամբ և ե-
ռանդով վերանորոգեց մոգերի օգնութեամբ՝ Զրա-
դաշտական կրօնը, և հրամայեց բացարձակ կերպով
տիրապետող կրօն ընդունուի իւր ստորագրեալների
երկիրներում: Այս աշխարհակալից յետոյ, իւր յա-
ջորդները՝ Շապուհ Բ, (309—380) շատ ազգեր նը-

ւաճելով՝ իւր նախորդի ուղղութեանը հետևեց: Այս
կրօնը գոյնպիսի ընթացք ստացաւ Շապուհ Բ-ի յա-
ջորդների ժամանակներում մինչև Խոսրով Ազրուէ-
զի գահակալութիւնը: Այս ժամանակներում արա-
բացիք գուրս գալով մեծ հոսանքով իւրեանց երկ-
րից՝ ողողեցին ամբողջ Պարսկաստանը և ջանացին
Մամետի Ղուրանը տարածել հալածելով Զրադաշտա-
կանութիւնը: Յազկերտ երրորդ Սասանեան վերջին
թագաւորը չկարողանալով մաքառել սոցա դէմ,
իւր երկիրը անպաշտպան թողնելով, Որմզդական
կրակն ձեռքը առած փախաւ Բակտրիան, ուր և
մեռաւ (651):

Այս շրջանից սկսած մոգերի օրէնքը կամաց.
կամաց անկման դիմեց: Սակայն և այնպէս, մինչև
այժմ այդ կրօնը դաւանում են Պարսկաստանի մի
քանի խուլ անկիւններում, ինչպէս օրինակ, Կոս-
մանում, Եզդում, Հնդկաստանում, Բոմբայ կոչուած
քաղաքի մի բուռը ժողովուրդ: Բացի սոցանից, Գու-
էբր անուանուած՝ տակաւին բարբարոսական լիճա-
կի մէջ գտնուող՝ մի փոքրիկ ցեղ, որ բնակուած է
Կովկասի սահմաններում. Գուէբրները երկրպագու-
թիւն են տալիս Բագուայ կրակներին:

13) “Վեգա կամ Ռեգ-Վեգա”, կոչուած հնդիկ-
ների հնագոյն, զանազան ժամանակներում յօրինած
սրբազն գրքերի ժողովածուն է, որի մէջ ամփո-
փուած են նախնական հնդիկների և մի քանի արիա-
կան ծագում ունեցող, ազգերի կրօնական սկզբունք-
ները: Այս մատեանը գրուած է „սանսկրիտ“ (Sans-
—kritam) կոչուած լեզուով, որ երկու հազար տա-
րի գեռ շատ առաջ գործածութեան մէջ էր Հընդ-
կաստրոնում: Բրահմանները կամ Վեգա կրօնի կու-
սակիցները այս թուականին կատարելագործութեան
հասած մայր լեզուին անուանում էին „աստուած-
ների լեզու“ (Surâni, Devabâni’i) իսկ սորա տարրե-
րին՝ աստուածեղէն գրեր կամ դիւցագրեր (Divâ-
nagari).



Հ. Ծ. Ձ. Շ. Վ. Մ. Պ.

ԳԻՆՆ է 15 ԿՈՊԵԿ,

4894



2013



4732